



...Եղբայրներ՝ որ, ողջ եղէք, հասարակական մնացէք, միսիթարուեցէ՛ք, միաբան եղէք, խաղաղութի՛նն արէք...
ՊՕՐՈՍ ԱՆԱԶԵՍԼ

Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

Հիմնադրված է 28 Փետրվարի 2013թ. • № 5 (278)

www.syuniacyerkir.am



Արագորեն մարող Ներքին Հանդես ուշադրություն է աղերսում հայրենի կառավարությունից

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Ներքին Հանդես գյուղ պաշտոնյաները սովորաբար այցելում են ընտրությունից ընտրություն՝ 4-5 փարին մեկ: Վերջին ընտրության նախօրյակին, սակայն, գյուղն այդ «պատվին» էլ չարժանացավ: Պատճառը, իհարկե, ընտրողների անընդհար շարքերն են, իսկ եղած ընտրողներն էլ (մոտ 50 հոգի), ինչպես հավաստեցին գյուղի վարիչները, հիմնականում ՀՀԿ-ի համակիրներ են, եւ ուրեմն գյուղում ընտրությունների հետ կապված խնդիր չկար: Վերջին անգամ իշխանական շքախումբը գյուղ էր այցելել 2012-ի մայիսի 6-ի ընտրություններից առաջ...

Արցախյան պատերազմի ժամանակ Ներքին Հանդեսը հակառակորդի թիրախ էր դարձել, չէ՞ որ ենթաշրջան սողոսկելու ամենահարմար ուղին հենց այդտեղով էր անցնում: Գյուղը քանիցս ձեռքից ձեռք է անցել, բնակիչները 1993թ. ապրիլի 10-ից մինչև այդ տարվա հոկտեմբեր հարկադրված էին բնակվել այլ վայրերում: Այդ ընթացքում աղբյուրների ասպատակները հասցրել էին հրո ճարակ դարձնել գյուղացիների ինչքը, այդ թվում՝ բնակարանները: Ազատագրումից հետո մարդկանց առաջնային խնդիրը պատերազմի հետևանքների վերացումը դարձավ, որը, մինչև հիմա, ամբողջապես չի լուծվել սակայն: 2012թ. Քաջարանի կոմբինատը, ՀՀ նախագահի համեմատարարությամբ, 42 ընտանիքի 200.000-ական դրամ հատկացրեց, բայց յոթ բնակարան՝ առավել շատ տուժած, այդ միջոցներով հնարավոր չէր վերականգնել ամբողջապես:

2013թ. հունվարին գյուղում կրկին բռնկվեց աֆրիկյան ժամատախտը, 68 զուլիս խոզ հարկադիր մորթի ենթարկվեց: 2008-ին էլ աֆրիկյան ժամատախտը գյուղի խոզերի վերացման պատճառ էր դարձել: Այն ժամանակ անասնատերերը դրա համար փոխհատուցում չստացան: Հիմա էլ անհավանական է, որ կորսված խոզերի համար հանդեցիք փոխհատուցում ստանան: Արդյունքում՝ գյուղը խոզաբուծության համար (բացառիկ նպաստավոր պայմաններ ունենալով հանդերձ) ռիսկային է, ինչի պատճառները գյուղնախարարությունը (նախարար՝ Սերգո Կարապետյան) ի վիճակի չէ բացահայտել (ոչ էլ փորձում է բացահայտել): Ներկայումս հարեւան գյուղերում էլ, ըստ հանդեցիների, թեւածում է աֆրիկյան ժամատախտը, ինչը նույնպես չի խախտում պատկան մարմինների եւ պաշտոնյաների անտարբերության ու անպատասխանատվության կուրսությունը:

Գյուղում տարեկան 4-5 ծուխ է մարում: Ոչ մի երիտասարդ վաղուց հույս չի կապում գյուղի հետ եւ ձգտում է առնվազն հանգրվանել Կապանում, եթե արդեն չի հանգրվանել: 46 բնակարանից 9-ի դուռն այլեւս եւ ընդմիջու փակված է, 13-ում միայնակ թռչակառու է բնակվում, յոթ ընտանիք (ինչպես Շարունակությունը՝ էջ 11


Հաղթեց ռուսական կողմնորոշումը, բայց եւ հասարակական ձգվումն առ Արեւմուտք

Րաֆֆի Հովհաննիսյանը շարունակում է վիճարկել Սերժ Սարգսյանի հաղթանակը, թեւ աշխարհի բազմաթիվ տերությունների ղեկավարներ արդեն իսկ շնորհավորել են նրան եւ փետրվարի 18-ի ընտրությունը համարել լեգիտիմ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ-2013

2013թ. փետրվարի 18-ին Հայաստանի Հանրապետության նախագահի, ըստ պաշտոնական տեղեկությունների, վերընտրվեց Սերժ Սարգսյանը: Նրա օգտին քվեարկեց ընտրության մասնակիցների 58.64%-ը (861373 ընտրող՝ գրեթե նույնքան, որքան 2008-ին):

Հանրապետության ընտրողների թիվը 2509958 էր, որից քվեարկությանը մասնակցեց 1521931 հոգի (60.6%): Սերժ Սարգսյանի հաղթանակը, սակայն, շարունակում է վիճարկել եւ փետրվարի 18-ի քվեարկության արդյունքում իրեն հաղթող համարել Րաֆֆի Հովհաննիսյանը: Վերջինիս եւ Սերժ Սարգսյանի համոզվածը՝ կայացած փետրվարի 21-ին, փոփոխություն չի մտցրել կողմերի դիրքորոշումներում: Հատկապես ընդդիմադիր տրամադրություններ ունեցող եւ Սերժ Սարգսյանի հաղթանակը չընդունող հազարավոր ընտրողների հավաքատեղին դարձյալ Ազատության հրապարակն է: Փետրվարի 20-ին տեղի ունեցած հանրահավաքը շարունակություն է ունեցել փետրվարի 22-ին: Րաֆֆի Հովհաննիսյանը հաղթահավաքներ է անցկացնում (իր իսկ բնորոշմամբ) նաեւ հանրապետության մարզերում: Թեւ Րաֆֆի Հովհաննիսյանը փետրվարի 18-ին 188452 քվե ավելի է ստացել (539693 քվե), քան Լեւոն Տեր-Պետրոսյանը 2008-ին (351222 քվե), թեւ անհամընդունակությունն ու անհնազանդությունը կրկին դարձել են մեր օրերի հիմնական բաղկացուցիչ, բայց «ժառանգության» առաջնորդն այդպես էլ



չի հստակեցնում ընդդիմության անելիքները: Նա, ըստ էության, ստվերային իշխանության ձեւավորման մտադրություն ունի, ինչի նպատակն է փետրվարի 25-ին: Քաղաքական գործընթացը, մինչ այդ, ջրապտույտի մեջ է առնում ուսանող երիտասարդությանը: Ստեղծված իրավիճակում կողմերից պահանջվում է ողջստիտություն, զսպավորություն եւ քաղաքական երկխոսություն, նաեւ փոխզիջումներ: Առձակատման ուղին անթույլատրելի է եւ չի


կարող արդարացում ունենալ որեւէ պարագայում:
Հ.Գ. Փետրվարի 27-ին Րաֆֆի Հովհաննիսյանն այցելել է Այունիքի մարզ է հանդիպումներ ունեցել Ազարակի, Սեղրու, Քաջարանի, Կապանի, Գորիսի եւ Սիսիանի բնակչության հետ: Այցի մանրամասները՝ մեր էլեկտրոնային կայքում (www.syuniacyerkir.am) եւ թերթի հերթական համարում:

Քվեարկության արդյունքները Սյունիքում

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՂԹՅՈՒՆ - 2013

ՀՀ Նախագահի ընտրությունը Սյունիքի մարզում իրականացվել է 153 ընտրական տեղամասում, այդ թվում՝ N37 ընտրատարածքում՝ 77 տեղամաս, N38 ընտրատարածքում՝ 76 տեղամաս: Ընտրողների ընդհանուր թիվը մարզի ընդգրկող երկու ընտրատարածքում 109713 էր, այդ թվում՝ N37 ընտրատարածքում՝ 57354, N38 ընտրատարածքում՝ 52359:

Քվեարկությանը մասնակցել է 71985 ընտրող (ընտրողների ընդհանուր թվի 65.6%-ը), այդ թվում՝ N37 ընտրատարածքում՝ 38228 (66.7%), N38 ընտրատարածքում՝ 33757 (64.5%): Երկու ընտրատարածքում անվավեր է համարվել 1644 քվեաթերթիկ:



Կապանը մերժեց Սերժ Սարգսյանին,

իսկ Քաջարանն ու Սիսիանը կասկածի տակ առան նրա սյունիքյան գործելակերպը

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՂԹՅՈՒՆ-2013

Սյունիքի մարզկենտրոն Կապանը, որ Հայաստանի հարավարևելքի ամենախոշոր քաղաքն է, որ Հայաստանի հանքարդյունաբերության մայրաքաղաքն է, փետրվարի 18-ին մերժեց Սերժ Սարգսյանին: Նրա օգտին քվեարկեց 7274 հոգի (42.1%), Ռաֆֆի Հովհաննիսյանի օգտին՝ 9375 հոգի (54.3%): Փաստորեն առաջին անգամ (անկախության տարիներին) երկրի գործող Նախագահը պարտություն կրեց Սյունիքի մարզկենտրոնում: Սերժ Սարգսյանի կապանյան պարտությունն ավելի ցայտուն է դառնում, երբ նրա օգտին տրված ձայների քանակը համեմատում ենք, ասենք, 2012թ. մայիսի 6-ին ԱԺ պարզամավոր Վահե Հակոբյանի հավաքած ձայների հետ: Վերջինս Կապան քաղաքում հավաքել էր 11299 ձայն՝ 19943 ընտրողից: Քաղաքապետ Աշոտ Հայրապետյանն էլ 2012թ. սեպտեմբերի 9-ին ավելի շատ ձայն ունեցավ (10261՝ 17365 մասնակցից), քան Սերժ Սարգսյանն այս տարվա փետրվարի 18-ին:



Ինչո՞ւ այդպես ստացվեց. պատճառները շատ են, բայց առանձնացնենք մի քանիսը:

Նախ՝ փետրվարի 18-ի ընտրությունը, կարելի է ասել, համաժողովրդական յուրօրինակ հանրաքվե էր, որ պետք է պատասխան տար սկզբունքային մի հարցի՝ որքանո՞վ է մարզկենտրոնը վստահում տեղական իշխանություններից: Եվ Կապանը շատ հստակ պատասխանեց, որ չի վստահում տեղական իշխանություններին: Իմիջիայլոց, այդ անվստահությունը միանգամից չէ, որ ձեւավորվել է: Անկախության տարիներին Կապանը մի քանի անգամ հիշեցրել էր (հատկապես քաղաքական ու համապետական միջոցառումների ընթացքում), որ չի կարելի իր հետ անհարգալից լինել: Կապանն իշխող կուսակցությանը լրջորեն զգուշացրեց նաև 2012թ. մայիսի

6-ի ընտրություններին: Այդ ժամանակ ՀՀ-ին Կապան քաղաքում բաժին ընկավ 7435 ձայն (39%): Դա էլ այն դեպքում, երբ քվեարկությանը ավելի շատ մարդ էր մասնակցել՝ 19178 հոգի՝ առանց զինվորների: Իսկ դա նշանակում է, որ դեռևս մեկ տարի առաջ ՀՀ-ն մարզկենտրոնի քաղաքական դաշտում գրկված էր մենաշնորհից: Իշխանությունները, սակայն, այդ հիշեցումներն ու իրողություններն արհամարհեցին և նոր սխալներ թույլ տվեցին: Սարգսյանի ստեղծման առաջին իսկ օրվանից, որքան էլ անհավատալի է, որդեգրվեց սատանայական մի կարգախոս՝ Սյունիքին (այդ թվում՝ Կապանին) անհրաժեշտ

է «ուժեղ ձեռք»: Եվ այդ կարգախոսով (ու այդ կարգախոսի յուրօրինակ ընկալումով) առայսօր կառավարվում է Սյունիքը, այն Սյունիքը, որ ի սկզբանե եւ դարեր շարունակ խարսխվել էր հոգեւոր հենքի, քրիստոնեական արժեքների վրա: Իսկ ի՞նչ էր նշանակում «ուժեղ ձեռքի» քաղաքականությունը Կապանում, եթե փորձենք հետադարձ հայացք ձգել մեր անցած ճանապարհին: Դա նշանակում էր՝ ա) պղծել անգամ քաղաքին մատակարարվող խմելու ջուրը (քանի որ այդ ջրով կարելի էր փող աշխատել), բ) քաղաքի անմիջական մերձակայքում ուրանի հանքեր որոնել, գ) շրջանի գյուղերը (ընդերում հարստություն

պարունակելու դեպքում) դարձնել հանքավայր, եթե նույնիսկ գյուղը սահմանադուռ է, ե) մարզկենտրոնը տարիներ շարունակ գրկել ԱԺ-ում պատգամավոր ունենալու հնարավորությունից, գ) մարզկենտրոնը գրկել սեփական կամքով քաղաքապետ ընտրելու հնարավորությունից, է) հանրակրթական դպրոցները դարձնել ընտրական տեղամասերի օժանդակ հաստատություն, իսկ դպրոցի տնօրենների գնահատման միակ չափանիշը դարձնել ընտրական գործընթացներին նրանց մասնակցությունը, ը) ջրահավաք ավազանները (եւ խմելու, եւ ոռոգելի ջրերի), քրիստոնեական սրբավայրերը և այլն»:

Լուրեր

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկական բաժանմունքում 17 երեխա ստացիոնար բուժում է ստանում: Ախտորոշված հիմնական հիվանդությունները, ինչպես բաժանմունքի վարիչ Լարիսա Ջահնգիրյանն է նշում, շնչառական ուղիների վիրուսային վարակներն են, որոնք երեխաներն ավելի շուտ են ընկալում: Բաժանմունքում կան նաև թոքաբորբով հիվանդ երեխաներ՝ նույնպես կապված շնչառական ուղիների վիրուսային վարակների հետ: Հիվանդությունը տարածվում է օդակաթիլային ճանապարհով: Բոլոր երեխաները ստանում են համապատասխան բուժում: Բարեբախտաբար, բաժանմունքը նոր է վերանորոգվել, կան անհրաժեշտ սարքավորումներ, չկա նաև դեղորայքի պակաս: Մասնագետները բոլոր մայրերին խորհուրդ են տալիս առաջին հերթին ինքնաբուժությամբ չզբաղվել, եւ եթե երեխայի մոտ նկատվում են այսուրեքի վատացում, ընդհանուր բուժություն, տրամադրության անկում, ծայրի խոչտություն, ապա պետք է անհապաղ դիմել համապատասխան մասնագետների՝ ճիշտ բուժում ստանալու համար: Միայն այդ դեպքում, ինչպես Լարիսա Ջահնգիրյանն է ասում, երեխան կկազդուրվի, եւ ծնողներն ավելորդ խնդիրների առջև չեն կանգնի:

Փետրվարի 15-ին Վանաձորում ՀՀ մշակույթի նախարարությունը կազմակերպել էր միջհամայնքային մշակութային երկրորդ ցուցահանդեսը (մարզային ArtExpo), որին մասնակցել էր նաև Կապան քաղաքի պատվիրակությունը՝ քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի գլխավորությամբ: Քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնից մեզ տեղեկացրեցին, որ կապանցիները ներկայացան «Մշակութային լավագույն քաղաքային համայնք», «Լավագույն գրադարան», «Լավագույն թանգարան», «Կերպարվեստի ոլորտի լավագույն ստեղծագործող», «Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտ» անվանակարգերում: Մրցույթի «Լավագույն գրադարան» անվանակարգում հաղթող է ճանաչվել Կապանի ակումբադարձարանային միավորումը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

Փետրվարի 21-ը մայրենի լեզվի միջազգային օրն էր, որն ամբողջ աշխարհում սկսել են տոնել 1999 թվականից՝ UNESCO-ի որոշմամբ: Տոնի հիմնական նպատակը լեզվական ու մշակութային բազմազանությանն ու բազմալեզվությանը նպաստելն է: Մայրենի լեզվի միջազգային օրը նշվել է նաև Սյունիքի մարզի բազմաթիվ դպրոցներում: Կապանի N9 ավագ դպրոցում հայոց լեզվին նվիրված տասնօրյակ է հայտարարվել, միաժամանակ դպրոցի 5-րդ եւ 6-րդ դասարանի աշակերտները միջոցառում էին կազմակերպել, որի ընթացքում ներկայացրել էին հայոց գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի կյանքը, գործունեությունը, հայոց գրերի ստեղծման պատմությունը: Աշակերտները կատարեցին նաև մայրենի լեզվին նվիրված երգեր, արտասանեցին բանաստեղծություններ, իսկ մինչ այդ պատրաստել էին պատի թերթեր, լեզվին նվիրված պատանուներ: Նմանատիպ միջոցառումներ էին կազմակերպվել նաև Կապանի N2 ավագ, N7 հիմնական, N6 միջնակարգ դպրոցներում:

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ. ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

**ԿԻՎԻՆ
ԱԼԵԿՍԻՆՎՈՒՄ Է
ԱԳԱՏՈՒԹՅԱՆ
ՆՐԱՊԱՐԱԿԸ**
Փետրվարի 20-ին,
22-ին եւ 24-ին տոնի
ուճեցան մարդաշատ
հանրահավաքներ



Լուրեր

Վ Փետրվարի 5-8-ը Սյունիքի մարզի չորս տարածաշրջանում անցկացվեց դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլը, որին մասնակցեց 2455 աշակերտ՝ Կապանից՝ 826, Գորիսից՝ 649, Սիսիանից՝ 780, Մեղրուց՝ 200: Օլիմպիադան անց է կացվել 16 առարկայից, իսկ մաթեմատիկայի օլիմպիադան այս տարի եւս անցկացվեց համացանցով: Ընթացքի մեջ են մարզային օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքները, որոնք մեկնարկել են փետրվարի 23-ին եւ կշարունակվեն մինչեւ մարտի 14-ը: Այն անց է կացվում մարզկենտրոն Կապանում՝ «Երեխաների խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում՝ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության մասնագետների հսկողությամբ՝ ամեն օր մեկ առարկայից: Օլիմպիադայի մարզային փուլին մասնակցում է հանրակրթական դպրոցների 571 աշակերտ, այդ թվում՝ Կապանից՝ 195, Գորիսից՝ 146, Սիսիանից՝ 153, Մեղրուց՝ 77 հոգի:

Վ «Հայազն» կուսակցության նախաձեռնությամբ ս.թ. փետրվարի 14-ին ՀՀ կառավարության շենքի առջեւ բողոքի ակցիա է կայացել՝ ընդդեմ Սյունիքի մարզի արտառվայրերն Իրանի Իսլամական հանրապետությանը վարձակալության տալու մասին որոշման: «Հայազն»-ի մամուլ պատասխանատու Արմեն Հովհաննիսյանը նշեց, որ այս գործարքը պետք է չեղյալ համարել, իսկ հետագայում նման որոշումները պետք է բացառել. «Այս որոշումը վտանգում է Հայաստանի ազգային անվտանգությունը: Մենք պահանջում ենք նաեւ, որ պատժվեն բոլոր այն պաշտոնյաները, ովքեր առաջին իսկ փուլից մասնակցել են բանակցություններին: Երբ ազգային շահը շահույթից ավելի ցածր է գնահատվում, ուրեմն բոլոր մեղավորները պետք է պատժվեն»: Նշեց, որ ակցիայի մասնակիցները, ովքեր ձեռքբերին ուճեին «Ոչ մի պարսկական ոչխար Սյունիքի մարզում», «Սյունիքը ձեզ համար արտառվայր չէ» կարգախոսով պաստառներ, կառավարությունից պահանջում էին չեղյալ հայտարարել վարձակալության որոշումը:

Վ Սրտի սալջարդը (ինֆարկտ) եւ արյան շրջանառության սուր խանգարում (ինսուլտ) հիվանդություններն այսօր դարձել են մեր հասարակության ամենամտահոգող խնդիրներից մեկը: 2013թ. հունվարից մինչեւ օրս (ամօցել է 57 օր) Սյունիքի մարզում վերոնշյալ հիվանդությունները (դրանցից մեկը) ախտորոշվել են 59 հիվանդի մոտ (Կապանում՝ 14, Գորիսում՝ 13, Սիսիանում՝ 14, Քաջարանում՝ 6 եւ Մեղրիում՝ 9): Բարեբախտաբար մարզի գրեթե բոլոր բժշկական կենտրոններն ունեցել են այդ հիվանդությունների բուժման բոլոր պատրաստուկներն ու պայմանները: Հավելենք, որ այս պահին մարզում կա 362 հոսպիտալացված հիվանդ (Կապանում՝ 70, Գորիսում՝ 113, Սիսիանում՝ 140, Մեղրիում՝ 20, Քաջարանում՝ 19), որոնցից 22-ն ինֆարկտով եւ ինսուլտով հիվանդներ են: Նշենք նաեւ, որ հոսպիտալացված հիվանդների զերակշռող մասը 0-7 տարեկան երեխաներ են: Այս պահին, ինչպես նշում են մարզի բժշկական կենտրոնների գլխավոր բժիշկները, բոլոր հիվանդներին ցուցաբերվում է համապատասխան բժշկական օգնություն, բուժման համար կա նաեւ անհրաժեշտ դեղորայք:



Փետրվարի 21-ին Սերժ Սարգսյանն ընդունել է Ռաֆֆի Հովհաննիսյանին, ջննարկվել է կողմերի դիրքորոշումը սպեղծված վիճակից դուրս գալու վերաբերյալ



ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ - 2013

Կապանը մերժեց Սերժ Սարգսյանին, իսկ Քաջարանն ու Սիսիանը կասկածի տակ առան Նրա սյունիքյան գործելակերպը

Սկզբը՝ էջ 2

րերը ծառայեցնել հանքարդյունաբերությանը...

«Ուժեղ ձեռքով» կառավարվող Սյունիքում ու հատկապես Կապանում, Քաջարանում ու Մեղրիում բնակչության շրջանում ժամանակի ընթացքում սկսեց նկատվել մի քանի հիվանդության աճ՝ մարդկանց մահացության աճին նպաստող, ծնելիության անկում, հաշմանդամություն աճ, գյուղական բնակավայրերի հոգեվարք, արտագաղթ (դրանց վերաբերյալ քանիցս ներկայացվել են վիճակագրական տեղեկություններ):

Սյունիքի հանքարդյունաբերությունը, որ կազմում է մարզի տնտեսության մոտ 80%-ը, ամբողջովին հակադրվեց մարզի բնական զարգացմանը: Գործի դրվեց հարկահավաքության եւ շահույթի բաշխման այնպիսի համակարգ, որ հանքարդյունաբերական ձեռնարկություններից մարզի համայնքներում կատարվող ամենաչնչին ներդրումն անգամ հայտարարվեց սեփականատերերի բարի կամեցողության, հայրենասիրության, վեհանձնության դրսևորում:

Եվ այդ ամենին զուգահեռ Սյունիքին տարիներ շարունակ պատվաստվում էր միանգամայն նոր արժեքահամակարգ, սերմանվում էր միանգամայն նոր ավանդակարգ: Ինչպես քանիցս ենք մշել, երկրի բարձր իշխանավորները մարզին (նաեւ Կապանին) նայում էին բացառապես մի քանի ընտանիքի շահերի պատուհանից: Սյունիք ժամանելիս երկրի վարիչները բավարարվում էին Մաքսիմ Հակոբյանի կովերի, մեղվափեթակների, ոչխարի հոտերի, երշիկի, կաթի, քարի արտադրամասերի հաստոցների ֆոնին լուսանկարվելով, Քաջարանի պրոֆիլակտորիայում եւ մարզպետարանում նույն մարդկանց հետ ինչ-որ քննարկումների պատրանք ստեղծելով:

Կապանը ծաղրելու պետական քաղաքականությունը զագաթնակետին հասավ 2012-ի ՏԻՍ ընտրությունների ժամանակ: Կապանի գործող քաղաքապետ Արտուր Աբայանը, առայսօր անհայտ հանգամանքների դրդմամբ, գրկվեց համայնքի ղեկավարի ընտրությանը (որպես համայնքի ղեկավարի թեկնածու) մասնակցելու հնարավորությունից, ինչը դժգոհության անմահապաղ ալիք առաջացրեց: Հագարավոր մարդկանց համար (դրանից հետո) առաջին անգամ (այսպիսի սրությանը) Կապանի արժանապատվության համար պայքարը դարձավ գերակա խնդիր:

Այդ ամենից հետո (թեեւ պատճառներ թվարկումը կարող ենք շարունակել) պարզագույն հիմարություն կլիներ Կապանից անկնկալել հարգալից վերաբերմունք գործող վարչախմբի հանդեպ:

Ստեղծված վիճակը (որ կանխատեսելի էր բոլորի համար) չկարողացավ սթափ զնահատել միայն Սերժ Սարգսյանի տեղական ընտրական շտաբը, որի ձեռավորումն իսկ կատարվել էր կապանյան իրողություններն անտեսելով: Շտաբի կառավարումը վստահվեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին,

ով ընդամենը մի քանի ամիս առաջ խնդիրներ էր ունեցել կապանցի ընտրողի հետ, ինչի մասին հիշողությունը թարմ էր: Ըստ էության ինքը՝ Աշոտ Հայրապետյանը, չպետք է ստանձներ այդ դերակատարությունը եւ պետք է հասկանար, որ հաջողության դեպքում իրեն չի հասնի հաղթանակի դափնու մի շյուղ անգամ, իսկ պարտության դեպքում քավության ճիգերի համար ինքն ամենահարմար թեկնածուն է լինելու, ինչպես եւ եղավ:

Կապանի (եւ ոչ միայն Կապանի) նախընտրական գործընթացների վրա դրական որեւէ ազդեցություն չունեցավ գործող նախագահի մարզային շտաբը: Մերժվածների եւ ծուլների մի հսկա թանգարան հիշեցնող այդ կառույցն անգերազանցելի դեր խաղաց գործող նախագահին հանրությունից հեռացնելու, օտարելու ամբար գործում: Մարզային շտաբի պետ Մաքսիմ Հակոբյանը, բանարկությունների եւ զոմբիացված վարձկանների, յաբուների ու կարիերիստների բույլով շրջապատված ու շրջափակված, լավագույնս ապացուցեց, որ ինքը (այդպիսի գործելակերպով) սյունիքյան քաղաքական դաշտում այլեւս ոչինչ է ու չպահանջված: Իհարկե, նա կարող էր այդպիսին չլինել, ինչն ապացուցել էր նախորդ բազում ընտրություններում, բայց... Ընտրությունների նախապատրաստման ամենաթեժ օրերին լրատվամիջոցներին տված բոլոր հարցազրույցներից երեւում էր, որ նա ընդամենը մեկ հոգս ունի քաղաքական այդ թոհուրեհում: Ապացուցել, որ իր եւ մարզպետի «բարեկամությունը» անկեղծ է ու հավերժական, ինչը, խոստովանենք, ոչ մեկին չատվաղուց չէր հետաքրքրում: Դե համ էլ դա Վահեի ընտրությունը չէր, այլ՝ Սերժ Սարգսյանի...

Մոտ 120 աշխատակից ունեցող մարզպետարանն էլ ցույց տվեց, որ ինքը քաղաքական վճռական պահերին (առնվազն Կապանում) գործոն չէ: Կամ, միգուցե, մարզպետարանի աշխատակիցներն էլ այլեւս համաձայն չեն նախագահի սյունիքյան գործելակերպին:

Սերժ Սարգսյանի սյունիքյան (նաեւ կապանյան) թիմը նախընտրական քարոզչության օրերին զարմացրեց իր խելջոթյամբ ու մտավոր սահմանափակությամբ: Չգտնվեց զոմե մեկը, որ դուրս գա հարթակ (նկատի ունենք հարթակի բոլոր տարբերակները) ու պարզ, մատչելի հայերենով ընտրողներին բացատրի-համոզի, թե ինչու պետք է փետրվարի 18-ին քվեարկել գործող նախագահի օգտին: Եվ այն ժամանակ, երբ հանրապետությունում առաջին անգամ բախվեցինք նախընտրական քարոզի ոչ ստանդարտ, ոչ ավանդական ձեւերի, Սերժ Սարգսյանի տեղական թիմը չկարողացավ ժամանակի հետ համահունչ քայլել: Նախընտրական պայքարի մեթոդները մնացին նույնը, ինչ ունեինք նախորդ 10-20 տարիներին. դպրոցի տնօրենին, գյուղապետին, սպիտակ խալաթից վաղուց օտարված բժշկին կանչում էին մարզպետարան, տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներին՝ Մաքսիմ Հակոբյանի կապանյան գրասենյակ, մանկապարտեզներին

վարիչներին՝ քաղաքապետարան... Եվ արդյունքում, գործող նախագահը, քաղաքական առումով, մնացել էր մենակ: Ապշեցնող էին իբր Սերժ Սարգսյանի օգտին քարոզչություն անողներից շատերի մտքերը: Օրինակ, Երեւանից Գորիս ժամանած մի դեգեներատ (ՀՀԿ կենտրոնական շտաբի գլխավոր քարոզիչներից էր) Գորիսի թատրոնի դահլիճում հավաքված հարյուրավոր ընտրողների այսպիսի կոչ արեց. «Ես ձեզ չեմ ասում գնացեք ու քվեարկեք Սերժ Սարգսյանի օգտին, ես ձեզ կոչ եմ անում՝ գնալ եւ մասնակցել քվեարկությանը, քվեարկեք՝ ինչպես կամենում եք, մնացյալի հետ դուք գործ չունեք»: Քարոզչական տեխնոլոգիաների նման «փայլատակումներ» երեւացին նաեւ Կապանի ու Սիսիանի երկնակամարում:

Անկախության տարիներին տեղի ունեցած նախագահական ընտրություններում առաջին անգամ Քաջարան քաղաքի ընտրազանգվածն այսչափ երկփեղկվեց: Գործող նախագահի գլխավոր մրցակիցն առաջին անգամ ստացավ այդ համայնքի քվեների 45.7%-ը: Սերժ Սարգսյանը Րաֆֆի Հովհաննիսյանին գերազանցեց 257 ձայնով եւ ստացավ վավեր քվեների 52.53%-ը: Սերժ Սարգսյանը, միաժամանակ, երեք տեղամասից մեկում պարտություն կրեց: Քաջարանում փետրվարի 18-ին տեղի ունեցած առնվազն ըշմանակում է, որ կոմբինատի սեփականաշնորհման անվան տակ 2004թ. տեղի ունեցած կողոպուտից հետո ունեզրկված քաջարանցիներն առաջին անգամ արթնության նշաններ են ցույց տալիս: Քաջարանցիները 2008-ից ի վեր հույս էին փայփայում, որ Սերժ Սարգսյանը հետ կվերադարձնի մի քանի հոգու կողմից իրենց գողացած 20% բաժնեմասը, բայց նրանց սպասելիքներն ի դերել եղան: Ընդհակառակը՝ Քաջարանի ասպատակներն ինտեգրվեցին նոր վարչախմբի հետ եւ ստացան նորանոր ինդուլգենցիաներ, որոնք, ի վերջո, ծառայեցվեցին ընդդեմ Սյունիքի: Անշուշտ, Քաջարանն իր վերջնական խոսքը դեռ ասելու է, քանի դեռ գողոնը չի վերադարձվել... Եվ այսպիսի տրամադրություններ ունեցող համայնքում, բնականաբար, չէր կարելի հարգալից վերաբերմունք ակնկալել իշխանությունների հանդեպ: Քաղաքապետ Վարդան Գևորգյանի գլխավորած նախընտրական շտաբն էլ, եթե նույնիսկ չատ ցանկանային շտաբ հնարողները, չէր կարող որեւէ կապ ունենալ իրական Քաջարանի ու քաջարանցիների իրական մտահոգությունների հետ:

Իրադարձություններն ավելի դրամատիկ ընթացք ունեցան Սիսիանում: Այնտեղ, ըստ էության, Սերժ Սարգսյանի թիմակիցները պայքարում էին ոչ թե գործող նախագահի հաղթանակի, այլ միմյանց վարկաբեկելու համար: Եվ դա նրանց հաջողվեց: Սիսիանում այդպես էլ չգտնվեց մեկը, ում կարելի էր վստահել գործող նախագահի նախընտրական շտաբի ղեկավարումը: Ըստ որոշ սիսիանցիների՝ Սերժ Սարգսյանը Սիսիանում կարող էր 70%-ից ավելի ծայր ստանալ, եթե այնտեղ ընդհանրապես ընտրական շտաբեր չձեռավորվեին: Իսկապես, Սիսիանի բախտը ՀՀԿ-ի

նախընտրական շտաբերի առումով չի բերում: 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների ժամանակ էլ ՀՀԿ-ի տեղական շտաբը փայլուն կերպով ապահովեց այդ կուսակցությունից մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորի թեկնածուի պարտությունը, ինչի համար շտաբի պատասխանատուն փետրվարի 18-ի քվեարկությունից առաջ ստացավ հերթական մեղալը: Մեղավների մասին... Սիսիանում լարվածությանը հավելյալ սրություն հաղորդեց քվեարկության նախօրյակին այնտեղ իրականացված մեղալների շարքը: Բանը նրան հասավ, որ ԵԿԻ-ի մեղավ տրվեց մի պսպղուն դասալիքի եւ ինքն իրենով լցված դատարկության: Դե իսկ արտավայրերի շուրջ բռնկված աղմուկն էլ սիսիանցիներին ստիպեց էլ ավելի վերապահունով մոտենալ գործող իշխանությունների գործելակերպին: Նման պայմաններում նույնիսկ հաջողություն պետք է համարել իրողությունը, որ Սերժ Սարգսյանը կարողացավ յոթ տեղամասից զոմե չորսում հարթանակ արձանագրել եւ ստանալ վավեր քվեների 51.6%ը (3690 քվե՝ 7295 մասնակցից): Փետրվարի 18-ի նախօրյակին սիսիանցիները չէին մոռացել (եւ չեն մոռանա) այն մանիպուլյացիան, որ տեղի ունեցավ 2012թ. սեպտեմբերի 9-ի ՏԻՍ ընտրությունների նախօրյակին: Այդ համայնքում, փաստորեն, ՀՀԿ-ն ԲՀԿ-ին վաճառեց քաղաքապետի պորտֆելը եւ թույլ չտվեց, որ արժանավոր սիսիանցիներն առաջադրվեն քաղաքապետի թեկնածու: Ի դեպ, ԲՀԿ-ի սիսիանյան մասնաճյուղի ղեկավարի ՀՀԿ-ամեն ակտիվությունը սովորական բլեֆ էր, ինչի վկայությունը շարքային ԲՀԿ-ականների մերժողական վերաբերմունքն էր Սերժ Սարգսյան թեկնածուի հանդեպ (ապացույցը՝ քվեարկության արդյունքները): ԲՀԿ-ական շարքերը նույն պահվածքն ունեցան նաեւ Կապանում, որի տեղական լիդերը նախընտրական օրերին հրապարակավ էր հավատարմության երդում տվել ՀՀԿ-ի մարզային շտաբին (այդ մասին գրվել է «Սյունյաց երկիր» 2013թ. հունվարի 31-ի համարում):

Սերժ Սարգսյանը պարտություն կրեց նաեւ Շաքե, Եղվարդ, Ծավ, Շրվենանց համայնքներում:

Սարգսյանը որոշակի անակնկալներ գրանցվեցին ընտրողների եւ քվեարկության մասնակիցների թվաքանակում: Այսպես՝ 2012թ. մայիսի 6-ի ՍԺ ընտրություններում Սյունիքի մարզի ընտրողների թիվը 121636 էր, քվեարկությանը մասնակցածների թիվը՝ 87932 (72.09%): 2013թ. փետրվարի 18-ի ընտրությանը մարզի ընտրողների ընդհանուր թիվը դարձավ 109713, քվեարկությանը մասնակցածների թիվը՝ 71985 (ընտրողների ընդհանուր թվի 65.6%): Դա նշանակում է, որ 11923-ով պակասել էր ընտրողների թիվը, 15947-ով՝ քվեարկությանը մասնակցածների թիվը: Արտառոց այս թվերի վերաբերյալ ոչ ոք դեռեւս բացատրություն չի տվել: Հատկապես անհասկանալի է ընտրողների թվի նման նվազումը: Հարցի վերաբերյալ շատ թե թիչ հիմնավոր պարզաբանումներ չտվեցին նաեւ մարզի տարածքն ընդգրկող N37 ԸԸՀ-ի նախագահ Արմեն Ստե-

փանյանն ու N38 ԸԸՀ-ի նախագահ Սերգեյ Սարգսյանը: Լավատեսակ որոշ աղբյուրներ, մինչդեռ, վկայում են, որ մարզում ընտրողների ընդհանուր թվի եւ քվեարկությանը մասնակցածների թվաքանակի եսկան նվազումը պայմանավորված էր զինվորականների մասնակցության սահմանափակմամբ: Քվեարկությանն այս անգամ մասնակցել են միայն մարզի տարածքում տեղաբաշխված զորամասերի զինվորականները, ինչը խրախուսելի քայլ պիտի համարել:

Այդ բոլորով հանդերձ՝ Սերժ Սարգսյանը փետրվարի 18-ին, համեմատած մյուս թեկնածուների, մարզում հավաքեց առավել շատ ձայներ՝ 45734 քվե (65.02%): Առավել բարձր ցուցանիշներ արձանագրվեցին գյուղական համայնքներում եւ Գորիս, Մեղրի, Ագարակ քաղաքներում: Գորիս քաղաքում քվեարկությանը մասնակցած 10505 ընտրողից (ընտրողների ընդհանուր թվի 62.2%) 71.5%-ը (7250 հոգի) քվեարկեց Սերժ Սարգսյանի օգտին: Մեղրիում քվեարկության մասնակիցների 67.72%-ը (1787 հոգի) նույնպես քվեարկեց հօգուտ գործող նախագահի: Մարզի քաղաքներից գործող նախագահի օգտին ամենաբարձր ցուցանիշը գրանցեց Ագարակը՝ 84.27% (2925 ընտրող): Գորիսում եւ Ագարակում ամեն ինչ, կարծեք, հասկանալի էր: Իսկ Մեղրիում... Մեղրին երկրորդ անգամ վստահեց քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանին՝ ակնկալելով, որ նա համայնքի ու տարածաշրջանի ծով հիմնախնդիրներից զոմե մեկ-երկուսը կկարողանա լուծման հանգրվան հասցնել: Այո, անկախության բոլոր տարիներին իշխող քաղաքական ուժերի համար անհասանելի-անսկզբելի Մեղրին գիտակցական քայլ կատարեց: Մնում է սպասել, որ իշխանությունը, զոմե այս անգամ, անկեղծորեն կզբաղվի մեղրեցիների մտահոգություններով: Այդ սպասումների դրոշակակիրը պետք է լինի Արշավիր Հովհաննիսյանը...

Սիսիանցիները իրողություններ արձանագրվեցին Սյունիքում 2013թ. փետրվարի 18-ին: Անշուշտ, Սերժ Սարգսյանը կարող է եւ ուշադրություն չդարձնել դրանց, ինչպես եւ վարվել է նախորդ տարիներին: Բայց անտարբերությունը, եթե շարունակություն ունենա, էլ ավելի կխորացնի իշխանությանը ներքին պրոցեսը, ինչի արդյունքում սյունիքյան հողը վերջնականապես կհոսի Սերժ Սարգսյանի ոտքերի տակից: Խոսքը, ըստ էության, կարդային փոփոխությունների մասին չէ սուկ, այլ (նախեւառաջ) Սյունիքի հանդեպ պետական նոր քաղաքականություն որդեգրելու մասին:

Սերժ Սարգսյանը, ըստ էության, պարագայում մի ճշմարտություն էլ պիտի իմանա: Րաֆֆի Հովհաննիսյանի օգտին հիմնականում քվեարկել են ոչ թե նրա գաղափարակիցներն ու զինակիցները, այլ գործող վարչախմբի հանդեպ ատելությամբ լցվածները: Եվ ուրեմն խնդիրը Ստեփան Դեմիրճյանի, Լեւոն Տեր-Պետրոսյանի, Գագիկ Ծառուկյանի, Րաֆֆի Հովհաննիսյանի մեջ չէ: Խնդիրը մի քանի հարյուր հազար ընտրողների մեջ է, որոնց արդարացի մտահոգությունների հետ պետք է լրջագույն, անկեղծորեն եւ առանց հապաղելու հաշվի նստել:

Հ.Գ. ...Որքան կուզենայինք, որ Սերժ Սարգսյանը փետրվարի 19-ին շնորհակալություն հայտներ ոչ թե իր թիմին, այլ բոլորիս՝ ամբողջ հայ ժողովրդին. չէ՞ որ երկրի առաջնորդի թիմն ամբողջ հայ ժողովուրդը պետք է լինի:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

ՇՉՈՐՍ ԴՎՎԹՅԱՆ. «...ԱՄԵՆ հայի մեջ մի փող Սահյան ապրեցնենք»

Նախքան Շչորս Դավթյանին հանդիպելը տպագրված գրքերից, համացանցից լիովին տեղեկացվել-իրազեկվել էի նրա մասին հնչած սրտաբուխ խոսքերից, կարծիքներից, ուսումնասիրել նրա կյանքը ու գործունեությունը, փորձել քննել-բացահայտել խորհրդային ժամանակներում արդեն իսկ կայացած պետական, կուսակցական, հասարակական գործչի, բանասերի, լրագրող-խմբագրի, գիտնական-դոկտորի զարմանալի ֆենոմենը, չքարոզվող կենսասիրության, վերընծալովու աղբյուրը: Անգամ մանրագին ընթացքից արվեստի եւ գրականության մեծերի (Համո Սահյան, Վահագն Դավթյան, Հրանտ Սաթեմուրյան, Էդուարդ Միրզոյան, Ջորի Բալայան, Սոս Սարգսյան, Ռազմիկ Դավթյան եւ այլք), կուսակցական, ռազմական գործիչների (մարշալ Հովհաննես Բաղդասարյան, Անաստաս Միկոյան, Կարեն Դեմիրճյան, Վլադիմիր Սովսիսյան...)՝ Շչորս Դավթյան անձնավորությանը նվիրված ջերմ պատկերները, հուշագրությունները: Մի խոսքով՝ ամբողջովին «զինված» էի մարդու այդ հետաքրքիր տեսակին հանդիպելու համար: Ավելին, համդիպումից ժամ առաջ լրացուցիչ «վերագինվեցի» Շչորս Դավթյանի այժմեական հակառակորդների համացանցային գրոհ-«մատենագիտությանը», մարդկայնորեն չկայացած ինչ-որ ինքնություն-իշխանավորների բողոք-լուսամբներով... Այնքան բան գիտեի արդեն, որ, թվում էր, սպասվող հարցազրույցի պատասխաններն էլ գիտեմ տողատակերի չասվածով... Սկզբում հասկացա՝ ուժեղ մարդ է Շչորս Դավթյանը (որ մնացել է անկուտրելի), մեծ ճանապարհի է անցել, եւ ուրեմն լրագրողական մի փոքրիկ հողվածում մեր գրույցն անփոփոխելով ոչ ուրիշ չի լինի: Չետո մտածեցի՝ մեծարելն ու հայիտելն էլ մեզանում իրարից անբաժան են, բնական, եթե փորձել ես փոքրիկն վեր բարձրանալ, եթե փորձել ես առանձնանալ համընդհանուր գործունեից: Եթե փորձել ես քո կուսակցական կյանքում անկուսակցական աշխարհ կերտել ես սեփական բնի վրա՝ ճախրող արծվի թևեր աճեցնել... Ծաքեի ջրվեժի գլխին, աստղերով ծփացող երկնքի տակ, ազգի մեծերով շրջապատված, մինչ-էն ուշ գիշեր... Համոյի աստղաբույր, հողաբույր տողերը հնչեցնել... Եվ ամենատվորակն օրը դարձնել հայրը պոեզիայի մի իսկական խրախուժանք... Եվ հանկարծ պարզեցի՝ ես, իրականում, ոչինչ էլ չգիտեմ Շչորս Դավթյանի մասին: Թերեւս միայն այն, որ մանկությունից հաճախ եմ լսել նրա անունն իմ հայրական օջախում, մեկ էլ, որ նրա անունը հաճախ է մեկտեղվել, գուգորդվել Համո Սահյանի անվան հետ՝ թե՛ որպես բանաստեղծի պոեզիայի նվիրյալի, թե՛ որպես գրողի գրական ժառանգության հետազոտող-ներկայացնողի... Սիսիանի տունը, որտեղ ապրում է Շչորս Դավթյանը, իր որմին կրում է Համո Սահյանի քանդակը՝ քանդակված Արա Շիրազի կողմից: Ամեն ինչ հասկանալի է. բանաստեղծի համդեպ պաշտամունքը սկսվում է հենց մուտքից:

Մարդ է, որ իր կուսակցական երկարամյա անցյալից կարողացել է կամուրջ նետել մեր օրերի մեջ եւ իրեն նվիրել Սահյանի գրական ժառանգության վերահաման ու պան-



Սուսաննա Բաբաջանյանը հարցազրույց է վարում Շչորս Դավթյանի հետ

Շչորս Դավթյան. բանասիրական գիտությունների դոկտոր, լրագրող, պատմաբան, պետական-հասարակական գործիչ, «Համո Սահյան գիտամշակութային կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ: Անունացած է, ունի երեք որդի, յոթ թոռ եւ մեկ ծոռ:

Ծնվել է 1938թ. մարտի 12-ին Էջմիածնի քաղաքում, զինվորականի ընտանիքում: Ծնողները սերուն են Գորիսի Ազատաշեն (Արեգունի) գյուղից: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: Եղել է Միսիանի «Որոտան» թերթի խմբագիր, Միսիանի կուլտուրայի 1-ին քարտուղար (1979-1988թթ.), ապա աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր (1988-1991թթ.): 15 տարի (1980-1995թթ.) եղել է Հայաստանի գեղարվեստի խորհրդի պատգամավոր: Այնուհետեւ կատարել է լրագրողական, պետական ու հասարակական աշխատանք:

Պարգևատրվել է ԽՍՀՄ շքանշաններով ու մեդալներով, վերջին քսան տարում՝ «Մարշալ Բաղդասարյան» եւ «Ֆրիտյոֆ Նանսեն» մեդալներով, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից՝ շնորհակալագրով, Հայաստանյալ առաքելական սուրբ եկեղեցու «Սուրբ Ներսես Ընդհանրի» շքանշանով:

Գեղինակ է մոտ քսան գրականագիտական, պատմագիտական, եկեղեցական եւ այլ գրքերի, այդ թվում՝ «Շուշի-ողբերգական ճակատագրի քաղաքը», «Միսիան»

նի բնակավայրերի պատմությունը», «Սյունյաց ազնվաշենի տիկնայք», «Ավանավոր սյունեցիներ», «Համո Սահյան բանաստեղծի հավատամքը», «Լոր, հնամենի գյուղ, հարյուրամյա դպրոց», «Համո Սահյան. կյանքը եւ գործը», «Համո Սահյան. բանաստեղծը, մտածողը, մարդը», «Մշտ Սաթյան-100»: Կազմել եւ հրատարակել է Համո Սահյանի «Ինձ բացակա չղնեք», «Համո Սահյան. 60 եւ մեկ հայրեն», «Համո Սահյանի, Եղիշե Չարենցի եւ Սայաթ-Նովայի քառյակներ» ժողովածուները եւ այլն: Վերջերս պետական աջակցությամբ հրատարակել է Համո Սահյանի ստեղծագործությունների քառասուորորի առաջին գիրքը, մոսկվայաբնակ սիսիանցիներ Արամ եւ Արմեն Ստեփանյանների հովանավորությամբ՝ «Համո Սահյան. հանրագիտարանը», իսկ մի քանի օր առաջ լույս տեսավ Համո Սահյանի «Ընտրանիք»:

Վերջին երկու տարում, կենտրոնի նախաձեռնությամբ, անց են կացվել բազմաթիվ գիտաժողովներ, գիտական թեզերի պաշտպանություններ, միջոցառումներ Համո Սահյանի գրական ժառանգության եւ անցած ուղու վերաբերյալ: Մայրաքաղաքի Կասյան փողոցի N3 շենքի վեմին (որտեղ ապրել է բանաստեղծը) տեղադրվել է հուշաքար: Այժմ կենտրոնը շարունակում է իր գործունեությունը հայ մեծ բանաստեղծի գրական ժառանգության արժեւորման, նրա ստեղծագործությունների հրատարակման եւ հիշատակի հավերժացման ուղղությամբ:

ճացմանը:

Դա էլ նրա առաքելությունն է այս կյանքում, եւ ոչ ոք չէր կարող կանգնեցնել այն: Կասեի՝ գեղեցիկ առաքելությունը, որը, դուրս լինելով ներմասնագիտական մեծաշնորհից, ժողովրդական բնույթ է կրել՝ իրական ծառայությամբ ու բանաստեղծի գրական երկերի վերահրատարակմամբ՝ հայության լայն զանգվածներին ու աշխարհին ներկայացնելով մեծ բանաստեղծին:

«Երանի թե այդպիսի նվիրվածությամբ եւ բժախնություններով օժտված շատ նվիրյալներ լինեին, ովքեր սիրով ու պատասխանատվությամբ զբաղվեին մեր գրողների՝ Պարույր Սեւակի, Մարո Մարգարյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Գեղորգ Էմինի, Վահագն Դավթյանի, մյուսների գրական ժառանգության հետազոտմամբ ու հրատարակմամբ», - ասում են Շչորս Դավթյանի ընկերներն իրենց հուշագրություններում: Իսկ ես ավելացնում եմ. «Այսօր ապրող ու ստեղծագործող գրողներն այնքան պաշտպանության կարիք չունեն, որքան՝ մեր դասականները, որոնց վաստակն ու կյանքը սերունդներին

ներկայացնելու, անընդհատ պայծառացնելու այնքան անհրաժեշտություն կա...»:

Նախատեսել էինք ընդամենը երեք հարց, որոնք, թեպետ, արտաքուստ իրար հետ քիչ կապ ունեն, սակայն, իրականում, անմիջապես նորեն առնչվում են Շչորս Դավթյան մարդու եւ կուսակցական նախկին ղեկավարի, մտավորականի եւ ազգային շահերն ու խնդիրները գիտակցող ուղղամիտ գործչի հետ, որի ոգեշնչման աղբյուրը մշտապես եղել է Հայաստան աշխարհը, նրա պատմությունը, բնությունը, ամեն քար ու թուփ՝ ունկնդիր հայրենի ձորերում արձագանքող Մախմինների ձայնին, ժողովրդի հոգսին, նրա հարստեման մեղեդիներին...

– Պարոն Դավթյան, Սոս Մարգարյան իր հուշագրության մեջ ասում է. «Անկեղծ ասած, Համո Սահյանի պոեզիային ինձ հաղորդակից դարձրեց Շչորս Դավթյանը, ով հազար անգամ կարդացել է ինձ համար Համոյի տողերը...»: Ո՞վ է Չեզ համար Համո Սահյանը եւ, արդյո՞ք այսօր մեծ բանաստեղծը բավականաչափ է ներկայացված ընթերցողին...

Արդյո՞ք արժանանում եք գործից Շչորս Դավթյանը, առանց գործիցիների «խանդան» առաջացնելու, կարող եր այդքան սիրահարված լինել Սիսիանին... Ինչպե՞ս սկսվեց կուսակցական գործչի եւ բանաստեղծի ձեր ընկերությունը, եւ ինչպե՞ս ծնվեց Համո Սահյան բանաստեղծին թեկնածուական, դոկտորական թեզերով պաշտպանելու, հետագայում՝ նրա ստեղծագործությունները տարբեր ժողովածուներով հրատարակելու միտքն ու առաքելությունը:

– Սկսեմ իմ գործիսյան արժանության: Այո, արժանանում եմ գործիցի եւ: Քանի որ հայրս զինվորական էր, ես գրեթե չեմ առնչվել Գորիսի հետ. ծնվել եմ Էջմիածնում, ապրել եւ կայացել Սիսիանում ու Երեւանում: Բայց դա ամենեւին չի խանգարել, որ հավասարաչափ սիրեմ ոչ միայն Գորիսը, այլեւ՝ ողջ Հայաստանը, նրա ամեն քաղաքն ու գյուղը: Զգիտեմ, գուցե, անկախ ինձանից, առիթ եմ տվել «խանդի», բայց ինձ ճանաչող եւ ոչ մի գործիցի այդպես չի մտածում. Գորիսում իմ արժանություններն են, Սիսիանում՝ իմ ճյուղերը: Գորիսն ու Սիսիանը, ինչպես նաեւ

Համո Սահյանն ու Ակսել Բակունցը հավասարաչափ սիրելի եւ կուռք են ինձ համար: Ավելին, Ակսել Բակունցի ստեղծագործություններն ավելի բարձր եւ արժեքավոր են դասում: Եվ եթե հրատարակել եմ Սահյանի ստեղծագործությունները, միաժամանակ հրատարակել եմ նաեւ Ակսել Բակունցի «Սքնածոր»-ն ու «Կյուրես»-ը, Եղիշե Չարենցի եւ Սայաթ-Նովայի, Դանիել Վարուժանի եւ Աշոտ Սաթյանի... Ռ՞վ է ինձ համար Համո Սահյանը: Քիչ կլինի, եթե ասեմ՝ ընկեր, խորհրդատու, սիրելի բանաստեղծ կամ ազգային արժեք: Ինձ համար Սահյանն այն բանաստեղծն է, ով իր պոեզիայով արժեւորել է իմ կյանքը, տվել ուժ եւ իմաստություն, եղել իմ ներաշխարհի անբաժան ուղեկիցը, սիրո եւ հավատո հանգանակը, այն անսահման օվկիանոս, առանց որի հնարավոր չէ պատկերացնել հայ ժողովրդի կենսագրությունը, նրա հարստեման գաղտնիքները: Հրանտ Մաթեոսյանն է ասել. «Սահյանը տարածությունների ու ժամանակների մեր այս ջղուտ ու դյուրագրգիռ խաչմերուկի հայ մարդը եղավ, եւ իր խոսքը մեր երթի համար օրհներգ եւ իր գործը՝ մեր դրոշի պատկերը դարձավ»:

– Պարոն Դավթյան, Սահյանն ինքը հարցազրույցներից մեկում ասել է. «Գրականությունը ժողովրդի ճակատագիրն է: Բանաստեղծի, արվեստագետի մեծ անհատականություն լինելը պետության, մի անբողոք տերության գոյություն է նշանակում...»: Ավելին, նա կարծում էր, որ մեքը անհատականությունների ժողովուրդ ենք, եւ Գյոթեի՝ «Ազգը պիտի փնտրես նրա տաք տուկոսի մեջ» արտահայտությունը մեջբերելով՝ սիրում էր ավելացնել. «Մեք մեր ոգով ապահովում ենք այդ տուկոսը...»: Արդյո՞ք Համո Սահյանը լիարժեք պատկերացնում էր, որ ինքն էլ ներառված է այդ տաք տուկոսի մեջ: Ը՞: Դր երբեմն մեծն ինքն էլ կենդանության օրոք չգիտե, որ բռնել է անմահության ուղին:

– Նրա շատ-շատ սքանչելի գործեր վկայում են, որ ինքը պատկերացրել է իր անմահությունը, ժողովրդի հավերժության մասնիկը լինելը, ինչպես ինքն է ասել՝ ժողովրդի ճակատագիրը լինելը: Զնայած, ասեմ, Սահյանը, լինելով բացառիկ համեստ անձնավորություն, ընկերության մեջ երբեք այդ մասին չի բարձրաձայնել, երբեք չի գովաբանել իր ստեղծագործությունները եւ ոչ էլ փորձել է պաշտպանել դրանք: Դա հենց նրա տաղանդի ու մեծության ակնհայտ երաշխիքն է եղել: Այդ մեկն էլ թողել է մեզ, որ այսօր ասենք: Եվ ես երբեք չեմ հոգում կրկնելու՞ թե՛ հանդիպումների, թե՛ միջոցառումների ժամանակ, որ Համո Սահյանի քնարերգությունը հայ ժողովրդի դարավոր մշակույթի հավերժական գանձերից է: Նա իր ստեղծագործության հսկայական նշանակությամբ եւ ճանաչողական իմաստների մեծությամբ, ընդհանրացումների տիեզերականությամբ, լեզվական կատարելությամբ մտավ բանաստեղծական գարգացման համաշխարհային ուղեծիր՝ շփման մեծ եզրեր ունենալով ինչ եւ նոր բոլոր խնդրագույն քնարերգուների հետ: Ավելին, այսօր Նա ոչ միայն ամենաընթերցվող բանաստեղծն է, այլեւ նրա ակունքները, բխելով սյունյաց աշխարհի բնությունից, բնաստեղծական բանաստեղծական ամբողջությունից, ամենահաղթանակ, հողոր ու հողեղեն բանաստեղծն է, ով մարդու մեջ տեսավ բնությունը եւ բնության մեջ՝ մարդուն: Նա երբեք չապրեց ու ստեղծագործեց երազային հայեցողությամբ ու անընթաց, բնության մեջ չորոնց խորհրդավորությունը

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

ՇԶՈՐԻ ՂԱՎԹՅԱՆ. «...Ամեն հայի մեջ մի փող Սահյան ապրեցնենք»

ՍԿԿՔԸ՝ Էջ 5

այնքան բնական ու ներդաշն համարելով կարմիր մատուց, կարմիր սարսուռ տանող առուն, ձորի վրա ծիվ-ծիվ հավքերը, քարանձավի ծերպերի մեջ ամպերի երգը, հոնքը ծռված քարայրը, Նորին մեծություն փլված երկինքը...

Այսօր ոչ միայն հայ, նաև օտար գրականագետներն են հետաքրքրվում Սահյան բանաստեղծով: Համո Սահյանը, ինչ խոսք, բավականաչափ ներկայացված է, բայց նրա պոետիկան ու փիլիսոփայությունն այնքան խորն են, որ դարձյալ մնում են լիարժեք չվերծանված: Անվերջ կարիք կա նորից ու նորից, նոր լույսի տակ ներկայացնելու... Ասեմ, որ այդպես են մեր բոլոր մեծերը, եւ բոլորն էլ հավասարաչափ իրենց ներկայացնող ու հրատարակող նվիրյալների կարիք ունեն: Հիշում եմ, աշխատում էի «Ռոտման» թերթում՝ խմբագրի տեղակալ: 1968 թվականն էր: Տպագրվել էր Համո Սահյանի «Քարափների երգը» բանաստեղծությունների ժողովածուն:

Կուսակցական գործչի ու բանաստեղծի ընկերություն, թե՛ մեծ բանաստեղծի պաշտամունք: Կուսակցական գործիչ լինելուց առաջ ես բանասեր եմ, հայ մարդ, գրականության սիրահար: Եթե մեր այսօրվա իշխանություններն ավելի շատ հասկանալի ու սիրելի գրականությունը, մեր մեծերին, առհասարակ մշակույթ, արվեստ, երեւի հասարակական մթնոլորտն ավելի բարի, կիրք եւ լուսավոր կլիներ, մարդկանց հոգիները՝ առավել բարձր ու ջերմ, իսկ գործերը՝ հայրենամտ՝ անճոճորակ: Եվ մշակույթն ու մեր մեծերն էլ այս օրին չէին լինի՝ երբեմն մոռացված, չընթերցված...

Իմ նպատակն է ամեն հայի մեջ մի տող Սահյան ապրեցնել, որ հավասարազոր է մի աշխարհի մարդանալուն ու մաքրվելուն...

– Մեծ բանաստեղծի մասին մեր գրույցը կարող է համեմատվել ձգվել եւ չավարտվել... Բայց ուրիշ հարցեր էլ ունենք: Արդ, կուզենայինք Ձեր կարծիքն իմանալ աղբյուրների գրող Արթուր Այլիսի մասին, ով վերջերս հրատարակեց «Քարե երգեր» գիրքը եւ աղբյուրների ժողովրդի ու նրա իշխանությունների կողմից արժանացավ հալածանքի եւ քարկոծման:

– Ասել, որ Աղբյուրների ժողովուրդը եւ իշխանությունը սխալ են վարվում՝ կնշանակի ոչինչ չասել: Ասեմ՝ ինչու: Վերջին 25 տարուն շատ է խորացել երկու ժողովուրդների միջեւ ատելությունն ու թշնամանքը, կարծրացել է բանաբանը, կնշանակի, մեղմ ասած, անտեղյակ ձեւանալ: Արթուրը, օրինակ, ասում է, որ ինքը չէր սպասում իր երկրի կողմից մեծ բռն արձագանքի: Զարմանալ կարելի է. ինչպե՞ս կարող է Արթուրի պես հայտնի գրողը չսպասեր մեծ հուժ-կու արձագանքի, ընդհուպ՝ գրքերի հրատարակալին այրման: Պետք է նա սպասեր, քանի որ, կրկնում եմ, թշնամանքն ու խոր ատելությունն առկա են երկու ժողովրդի միջեւ: Առկա է սառցե պատնեշը, որը մեկ օրում հնարավոր չէ հալեցնել: Ավելին, օր օրի ավելի է խորացվում այդ թշնամանքը հայերի եւ աղբյուրների միջեւ: Հատկապես աղբյուրների միջին մոտ դա հասել է ծայրահեղ դրսևորումների, ատելությունը հայերի հանդեպ պարզապես կուրացրել է նրանց աչքերը:

Երկար տարիներ աշխատելով Սիսիանի կուսընթացի առաջին քարտուղար՝ կամա-ակամա շփման եզրեր են եղել աղբյուրներից գյուղերի, ինչպես եւ սահմանամերձ աղբյուրներից գյուղերի բնակչության ու նրա ղեկավարության հետ: Վիճահարույց ամեն մի հարց փորձում էինք լուծել փոխըմբռնման պայմաններում: Այլ կերպ հնարավոր չէր: Այլ կերպն արյունահեղություն կարող էր առաջ բերել, կարող էր մեկընդմիջտ այնպիսի թշնամանք ստեղծել, որ հետագա յուրաքանչյուր շփում հովվի, հողագործի, այնտեղ բնակվող մեր ազգակիցների, յուրաքանչյուր մեկին համարավարտվեր ծանր հետեւանքներով: Մենք հարեան էինք եւ այժմ էլ հարեան ենք աշխարհագրական անբե-

կանցի ղասավորությամբ, ուզում ենք դա, թե ոչ:

Արթուրի գիրքն ընթերցել եմ ծայրից ծայր: Հիացած եմ, բայց ոչ միայն, որ հայերի մասին հավանաբարով եւ ճշմարտությամբ է արտահայտվում, այլեւ նրա համարձակությամբ եւ գրողական բարձր կերպարով: Ողջունում եմ գրող Արթուր Այլիսի միտքը. «...Ես միշտ դեմ եմ եղել հայերի ու աղբյուրների միջեւ թշնամանք սերմանելուն: Իմ ստեղծագործությունը քաղաքական չէ, այն ուղղված է ժողովուրդների միջեւ ատելությունը ներշնչելու քաղաքականության դեմ: Դա հարկ չէ ոչ աղբյուրներից, եւ ոչ էլ հայերից: Աղմկահարույց վեպի հեղինակին ճանաչել եմ դեռ 80-ականներից: Այդ ժամանակ որդիս ծառայում էր Նախիջեւանում: Գնացել էի Օրդուբադ եւ հանդիպել տեղի կուսընթացի 1-ին քարտուղարի հետ: Սի հրաշալի, բարի եւ համեստ անձնավորություն էր (ինչո՞ւ չասել): Մանկությունից որք է եղել, ապրել է Հանդանուե գյուղում, եւ նրան մեծացրել է մի բարի հայ կին: Քարտուղարը, լինելով մուսուլման, պատկերացրեց, իմն խնդրել է կնոջ եւ երկու երեխայի հետ իրեն տանել Էջմիածին: Վանքում նրանք մոտ եւ վառել, հայավարի խաչակնքել: Միշտ ասում էր. «Իմ կյանքով պարտական եմ հայերին»: Ո՞ր գնաց, ո՞ր մնաց այդ գիտաբերությունները մի՞թե հնարավոր չէ կամաց-կամաց շտկել: Հենց ինքն էլ իմն ծանոթացրեց ու ներկայացրեց աղբյուրների գրող Արթուր Այլիսիին, ուն իսկական ազգամուժը Նայիրով է: Տպավորությունը լավ էր: Զգացի՞ կարգին, անաչառ գրող է: Հիշում եմ հիացմունքով արտահայտած նրա խոսքերը Համո Սահյանի, Հրանտ Մաթեոսյանի ստեղծագործությունների մասին: «Ապշած եմ նրանց գրչով, տաղանդով», – ասում էր նա: Անձամբ ճանաչում էր Սուրեն Սյվազյանին:

Արթուրն ազուլիսից է: Իսկ Ազուլիսը հին հայկական բնակավայր էր՝ իր 12 վանք-եկեղեցիով: Ժամանակին ուներ 40 հազար հայ բնակիչ, կազմված էր վերին եւ ներքին Ազուլիսներից: Անկրկնելի ճարտարապետական կառույցներ ուներ՝ ստորգետնյա ջրերով, խելացի մտածված քաղաքային մշակույթով: Հենց այդ պիտիությունն էլ ծնվել ու մեծացել է Արթուրը՝ աչքի դեմ մշտապես ունեցնելով Սուրբ Թովման եւ մյուս եկեղեցիները, հայերի մաքրաբարո կենցաղն ու ազնվական հոգին:

Եւ Արթուրի «Քարե երգեր»-ը սխրանք են համարում: Ցավոք, այն ճիշտ չընկալվեց իր կառավարության ու ժողովրդի կողմից: Ժողովուրդն էլ մեղավոր չէ. սառույցը դեռ չի հալվել: Պետք է երկու երկրում էլ ժողովրդական դիվանագիտությունն աշխատի՝ գերծ մնալով ամեն արտաքին միջոդողություններից: Պետք է երկու կողմերն էլ կարողանան կանգ առնել եւ վերանայել, շտկել դրացիական հարաբերությունները: Ի սեր ժողովրդի, ի սեր երկու երկրների հետագա զարգացման, հարստեանման, ի սեր այլեւս անշրջելի հարեւանության, ի սեր խաղաղության: Գիտեմ, դժվար բան են ասում, բայց... Հիմա տարի աշխատել եմ կառավարությանն առընթեր փախստականների վարչությունում: Ինչո՞ւ եմ դա ասում: Դարձյալ Արթուրի մասին է խոսքը: Լավ տեղեկացված եմ. հայ-աղբյե-

ջանական հակամարտության օրերին աղբյուրներից տղամարդիկ լքում էին իրենց հայ կանանց, նրանց միայնակ ուղարկում Հայաստան, իսկ հայ տղամարդիկ, ովքեր ամուսնացած էին աղբյուրներից, նրանց էլ իրենց հետ բերում էին, չէին լքում: Ահա տեսեք, թե ատելությունը հայերի նկատմամբ ինչ աստիճանի էր հասնում աղբյուրներիցների շրջանում, եւ պատկերացրեք Արթուրի վիճակը... Գրողն ընդամենը փորձել է կոտրել սառույցը՝ երկու ժողովրդի միջեւ, փորձել ճշմարտության մասին բարձրաձայնել, նա առաջին սխրալի քայլն է արել եւ չի զղջացել:

Ես ամենամբ ծափահարում եմ Արթուրին, միաժամանակ գիտակցում նրա ինքնագոհության իրական արժեքը: Պետք է փորձենք զգուշորեն վերաբերվել նրա շուրջ տեղի ունեցող զարգացումներին: Ուշադրություն դարձրեք. Արթուրն իր գրքի մեջ ոչ մի բառով չի ակնարկում Ղարաբաղյան հակամարտության մասին: Դա պարզ հարվեր է՝ անցյալի ցավը մոռանալու...

– Լինելով երբեմնի փորձառու պետական գործիչ՝ ինչպե՞ս եք գնահատում Սյունիքի արտավայրերը վարձակալության Իրանի Իսլամական Հանրապետությանը տալու մասին խոսակցությունները: Քաղաքական եւ տնտեսական առումով խնդիրն ինչպիսի՞ հետեւանքներ կարող է ունենալ:

– Միանշանակ ասեմ. այդ մասին խոսակցություններն անգամ ինքնին դատապարտելի են: Զգիտեմ՝ իրականում խնդրի շուրջ պետական անկարողանելու բանակցություններ, որպես այդպիսիք, եղել են, թե՛ ոչ, բայց պետք է մնան մտայնությունը վիճեցնել, թույլ չտալ, որ այն ծիլ տա: Չեն կարծում, որ մեր իշխանությունները խելքը հացի հետ այնքան կերած լինեն, որ նույնիսկ մտքներով այդպիսի բան անցնի: Թող ինչքան էլ մեր տնտեսությունը կաղա, ինչքան էլ անհուսալի թվա իրավիճակը, ինչքան էլ ամենաբարի մտահոգությամբ պատճառաբանվի հիշյալ արտավայրերի չօգտագործման փաստը: Եղբայր, չես օգտագործո՞ւմ, ամօխտելի փաստ է: Տարածք տալով՝ որեւէ խնդիր չես լուծի, ավելին, այնպիսի ծանր խնդիրներ կառաջանան, այնպիսի անլուծելի իրավիճակներ կստեղծվեն, որ տարիներով չեն շտկվի: Իսկ ավերիչ ազդեցությունների մասին էլ չեն խոսում. այն հուժկու հարված կլինի հատկապես երկրի ու ժողովրդի բարոյական, սոցիալական, քաղաքական արժեհամակարգին: Դա անթույլատրելի է նաեւ ազգային անվտանգության տեսակետից:

Այժմ, ինչպես ասացիք, խոսեմ որպես երբեմնի պետական գործիչ: Երբ Սիսիանի կուսընթացի քարտուղարն էի, այդ տարիներից եղավ մի իրավիճակ, երբ աղբյուրներիցների հոսքը դեպի Հայաստան, դեպի ամսանապահության համար բարենպաստ շրջաններ սպառնալի չափեր ընդունեց: Նույնն էր եւ Սիսիանի արտավայրը՝ իհարկե խոտածակույթով: Որպեսզի խոտափեղեք ազգամիջյան ընդհարումներից եւ արյունահեղությունից, սկսեցի վա-

րել շատ նուրբ, միաժամանակ կոշտ քաղաքականություն: Լայնածավալ աշխատանքներ տարա՝ օգտագործելու մեր արտավայրերը: Հայաստանում արտագործված շվեյցարական 1000 տոննա պամից 450 տոննա միայն Սիսիանն էր արտադրում: Կաթի օրական արտադրությունը հասցրել էինք 120 տոննայի: Սիսիանի շրջանի արտոններում (այդ թվում՝ պետֆոնդի արտավայրերում) պահել ենք 145 հազար ոչխար եւ 60 հազար խոշոր եղջերավոր անասուն:

Սիսիանը 160կմ սահման ուներ Աղբյուրներից հետ: Դժվար էր ամենօրյա հսկում իրականացնել, բայց մեր բոլոր ուժերը կենտրոնացրինք այդ ուղղությամբ, եւ մեր օղակներում հաստատեցի, կարելի է ասել, խիստ վերահսկելի դրություն: Դա, իհարկե, հեշտ չի եղել: Պատահել է՝ վրանները մեր արտավայրերում խփած աղբյուրներիցների կանայք ուղղակիորեն դուրս են եկել մեր դեմ՝ սպառնալով մորթել իրենց երեխաներին, եթե մենք նրանց դուրս հանենք մեր արտավայրերից: Անգամ դանակներ են ճոճել իրենց ծնկեր երեխաների գլխին, լաց ու կոծով պոկոտել իրենց մազերը: Ինչպիսի ջանքեր էին մեզանից պահանջվում՝ արյունահեղությունից խուսափելու համար, եւ ինչպիսի մտածված քաղաքականություն էր պետք բանեցնել, մանավանդ որ Արտակալից եկող չինովհիկների պատկերացմամբ՝ դա մեր ընդհանուր պետության տարածքն էր, եւ աղբյուրներիցները նույնպես կարող էին օգտվել այդ արտավայրերից: Ինչէնէ, արտավայրերը մենք էինք օգտագործում: Իսկ անգամ մեկ քառակուսի մետր արտավայր անգամ աղբյուրներիցների վաճառող տնտեսություններն ճանաչահեցինք մազատում էի աշխատանքից, պատասխանատվության ենթարկում: Բազմաթիվ նման օրինակներ կան...

Այսօր էլ, ավելի, քան երբեւէ, մեր տարածաշրջանում սոցիալապես պես ծառայել է արտավայրերի ռեալ, ճիշտ օգտագործման խնդիրը: Ցավոք, դրանց 20%-ը հազիվ է օգտագործվում: Այդ ուղղությամբ պետք է մտածեն մեր իշխանությունները, ստեղծեն բրդի, կաշվի տեղական մշակման եւ իրացման շուկաներ, որպեսզի ոչխարաբուծությունը շահավետ լինի: Փառք Աստուծո, Սյունիքը լայն հնարավորություններ ունի, եւ պետք չէ խուճապի մատնվել, անել մի այնպիսի «հեշտ» քայլ, որի դիմաց ավելի թանկ է ծանր հատուցում է պահանջվելու սերունդներից... Տեսնում եմ՝ նույն բանաձեւը, ինչ տարիներ առաջ ենք կիրառել, վերստին կիրառելու խնդիր կա: Ի վերջո, սա էլ համարեմք մեր ազգի առջին ծառայած մի յուրովի սպառնալիք, եթե ոչ՝ մարտահրավեր, եւ միասին-համախոնք մերթմեք արտավայրերը վարձակալությանը տալու գաղափարը: Առանց տանու տալու եւ առանց վիրավորելու Իրանի Իսլամական Հանրապետության շահերը, եթե այդպիսիք կան: Ամեն դեպքում ես լավատես եմ, եւ, կարծում եմ, Սյունիքի արտավայրերը վարձակալությանը տալու մասին խոսակցությունները պարզապես թյուրիմացություն են: Այսօր ոչ միայն Սյունիքի մարզը, այլեւ ողջ հանրապետությունն ունի արտավայրերի խելացի օգտագործման խնդիր: Բայց ունենք նաեւ մի, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման անհրաժեշտություն, որը պետք է լուծենք նաեւ այդ արտավայրերի խելամիտ օգտագործման շնորհիվ: Այս, թույլ տվեք ասել, ռազմավարությունը պետք է որդեգրեն երկրի իշխանությունները:

Հարցազրույցը՝ ՍՈՒՄԱՆԱ ԲԱԲԱԶՆՆՅԱՆԻ

ԱՅՈՒՆՅԱՑԻՆԵՐԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

ԽԱՉԻԿ ԱՍՐՅԱՆ. «Իմ հպարտությունն իմ հզոր հայոց պետականությունն է»

Հարցազրույց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ Խաչիկ Ասրյանի հետ

Սկզբը՝ էջ 7

րավորություն են ստեղծում օգտակար լինել դիմողներին:

«Հայոց արծիվները» երեք փարեկան է

– Դուք հանրապետությունում նաև հայտնի եք որպես «Հայոց արծիվներ» հայրենասիրական կազմակերպության հիմնադիր նախագահ: Հունվարի 27-ին լրացել է կազմակերպության երեք տարին: Կիսնորեինք մերկայացնել նրա հիմնադրման նախապատմությունը և նպատակները:

– Որպես այս հարցի նախաբան նշեմ, որ «Հայոց արծիվներն» ունի հարուստ նախապատմություն: Նախքան նրա հիմնադրումը՝ 2002թ. սեպտեմբերի 26-ին ստեղծվել է «Այունյաց արծիվներ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը, նույն թվականի նոյեմբերի 10-ին տեղի ունեցել կազմակերպության հիմնադիր համագումարը, որով հիմք դրվեց մերօրյա անկախության համեստ ձեռքբերումներից մեկը: Յոթ տարուց ավելի Այունյացում մեծածավալ աշխատանք է կատարվել, հայրենասիրական բազմաբովանդակ միջոցառումներ իրականացվել, որոնք հիմնականում միտված էին ինչպես երիտասարդությանն առնչվող հիմնախնդիրների լուծմանը, այնպես էլ հայոց ազգային բանակի տարբեր գործառնական պատանիների և երիտասարդությանը շրջանում ռազմաօդային հասարակական դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացմանը: Յոթ տարում Այունյացում իրականացվել է երկու հազարից ավելի հայրենասիրական միջոցառում, կազմակերպության շարքերում կամավոր հիմունքներով անդամագրվել է ութ հազարից ավելի պատանի և երիտասարդ: 2007-ի հունիսին նշանակվելով սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար՝ շատ կարճ ժամանակում շրջագայեցի հայկական բարձրակարգակի տարբեր բնակավայրերում, իսկ 2009 թվականի ավարտին, երբ մայրաքաղաքում մեծ շուքով նշվեց «Այունյաց արծիվների» հիմնադրման տարեդարձը, իմ մեջ միտք հղացավ նրա զարգացմանը տարածել ամբողջ հայկական բարձրակարգակի վրա: 2010թ. հունվարի 27-ին «Հայոց արծիվների» 13 նվիրյալ անդամներով ստեղծեցինք կազմակերպությունը, որ գրանցվեց պետաբարձրում: Իսկ հունվարի 29-ին եռաբլուր պանթեոնում՝ եկեղեցու առջև, Արցախյան հերոսամարտում նահատակված ազատամարտիկների շիրիմների հարեանդամքանք 1000-ից ավելի համախոհներով հիմք դրվեց «Հայոց արծիվներ» հայրենասիրական շարժմանը: Եռաբլուր պանթեոնում էլ «Հայոց արծիվները» որդեգրեցին ազգային, պետական, հայրենասիրական զարգացման նպատակները, «Հայոց պետականությունը, ազգային բանակ, հայոց նախագահ» կարգախոսը՝ որպես եռամիասնության արժեքային համակարգ: Եռաբլուրում «Հայոց արծիվները» երկու տվեցին անվերապահորեն ծառայել Հայաստանի Հանրապետությանը, հայ ժողովրդին, թե՛ խաղաղության, և թե՛ պատերազմի ժամանակ: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ, համախմբվելով միասնության տանիքի՝ հայոց պետականության, ազգային բանակի, հայոց նախագահի շուրջը, այն համոզմունքն ունի, որ այսօր, քան երբեք, կլինի ավելի ուժեղ, հզոր և միասնական: Ինչպես նշված է կազմակերպության ուղերձի մեջ, ժամանակակից հայ մարդը պետք է առաջնորդվի ցեղակրոնի հիմնարար երկու դրոյթով. «Մեր բոլոր դժբախտությունների համար, նախելառաջ, մեղավոր ենք մենք» և «Մեզ անհրաժեշտ ուժը փնտրենք մեր մեջ»:

– Որքանով տեղյակ ենք «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը երկու տարեկան է՝ բուկլետից, կազմակերպությունը գրասենյակ-



25 դեկտեմբերի 2011թ., «Հայոց արծիվների» փարեմուտի երեկոն

մասնաճյուղերի տեսքով իր ներկայությունն է ապահովել հանրապետության բոլոր մարզերում:

– Ծանրաբեռնված լինելով պետական գործերով՝ այնուամենայնիվ, ժամանակ են գտել (և գտնում) հիմնականում շաբաթ-կիրակի օրերին, շրջագայել հանրապետության մոտ հինգ հարյուր բնակավայրով: Դրա գործնական արդյունքն այն է, որ 300 բնակավայրում հիմնադրվել է 300 մասնաճյուղ, «Հայոց արծիվներին» կամավոր հիմունքներով անդամագրվել է 30 հազար 188 քաղաքացի, որոնց տարիքը տատանվում է 16-ից 80-ի սահմաններում: «Հայոց արծիվների» եռամյա գործունեությունը համարում են «Անհնարինը՝ ակնհայտ» բանաձևի լիարժեք իրականացում: Այդ ընթացքում 503 միջոցառում ենք անցկացրել տարբեր գյուղական և քաղաքային համայնքներում, որոնց մասին մանրամասն տեղեկություններ կան «Հայոց արծիվների» կայք-էջում, ինչպես նաև արտացոլված են բուկլետներին և տեսաֆիլմերի տեսքով: Ցանկանում են փաստել մի համգամանք: Կազմակերպությունը 300 համայնքում մասնաճյուղ հիմնադրելով 300 կոմպլեկտ մարզագույք է տրամադրել այդ համայնքների դպրոցներին՝ ֆիզկուլտուրայի դասերի օգտագործելու համար: Այս ամսին 300 օդանվիչ հրացան կհատկացնենք հանրապետության համայնքների դպրոցների ռազմագիտության կաբինետներին: Ընդ որում այդ ամենը ձեռք է բերվել կազմակերպության հայթայթած միջոցներով:

– Ինչպես երևում է կազմակերպության քարտզակն նյութերից, սերտ են «Հայոց արծիվների» հարաբերություններն ազգային բանակի հետ:

– Ինչ վերաբերում է ազգային բանակի հետ փոխհարաբերություններին, կազմակերպությունն ի սկզբանե որդեգրել է բանակ-հասարակություն կապը շարունակաբար ամրապնդելու, նաև հայրենիքի պաշտպանության դիրքերում հայ սպայի, հայ զինվորի ոգին բարձր պահելու քաղաքականություն: Մասնավորապես, նաև նրա մեջ ջանում ենք սեր-

մանել այն զաղափարը, որ ինքը պաշտպանում է ոչ միայն խրամատը, այլև խրամատի հետևում գտնվող մի ժողովուրդ, ինչի համար պետք է հարյուր լինի: Պարբերաբար այցելություններ են կատարվում զորամասեր, որտեղ նախագիտակցային տարիքի պատանիները ծանոթանում են բանակային առօրյային, կրակային պատրաստություն ստանում, տեղի են ունենում ռազմաօդային հասարակական ֆիլմերի ցուցադրումներ, ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, մարզական խաղեր, ազգագրական-հայրենասիրական համերգներ: Աչքի ընկած սպաներին համծնում ենք «Լեռնահայաստանի արծիվ» ոսկյա հուշանդամ, զինվորներին՝ անվանական նվերներ: Այս ամենը, ինչ խոսք, բարձրացնում է սպաների և զինվորների տրամադրությունը: Բայց այս ամենի մեջ առավել կարեւորում են այն, որ նախագիտակցային տարիքի պատանիները և աղջիկները հիմն-տասը փամփուշտ կրակում են ինքնաձիգի, զգուն վառողի հոտը:

– Նաև կողքից ակնարկներ են հնչում, թե իբր սակավ մասնակցություն ունեք հանրապետության ներքաղաքական գործընթացներին:

– Եվ ճիշտ են նկատել: Կազմակերպության նպատակը ներքաղաքական բանասիրություններին մասնակցելը չէ: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ գիտակցում է մեր երկրին նետված մարտահրավերները՝ կապված նրա աշխարհաքաղաքական դիրքի հետ, շատ հստակ գիտակցում է, թե օտարածին բարքերը են քայքայիչ աղանդներն ինչ ավերածություններ կարող են գործել երիտասարդների, բնակչության հոգիներում: Եվ գիտակցելով այդ ամենը՝ «Հայոց արծիվները» յուրաքանչյուր համայնքում համերգաշխուքան են միասնության կոչ է անում, նաև հաշվի առնելով հարեան հորինված հանրապետության ղեկավարի կողմից ամենօրյա հնչող պատերազմը վերսկսելու սպառնալիքներն ու ռազմատենչ կոչերը:

– Ցանկանում են Ձեր կարծիքն իմանալ հասարակական կազմակերպությունների մասնաճյուղերում: Էջ 10

ՏԱՊԱՏՆՈՒ

ԽԱՉԻԿ ԱՍՐՅԱՆ ■ Ծնվել է 1970թ. փետրվարի 13-ին Այունիքի մարզի Գորիս քաղաքում: 1977-87թթ. սովորել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 1988-91թթ. ծառայել է խորհրդային բանակում՝ Հեռավոր արեւելքում՝ ծովային հետեւակ: 1991թ. Այունիքում իր նախաձեռնությամբ ստեղծել է ամենաերիտասարդ ջոկատը՝ «Նժդեհյան զայլախումբ» անվամբ, որում ընդգրկվել են 15-18 տարեկան պատանիներ և աղջիկներ, ովքեր Տաթևում և Հալիձորում անցել են ֆիզիկական, տեխնիկատակտիկական խիստ մասնագիտացված դասընթացներ: «Նժդեհյան զայլախումբ» ջոկատով մասնակցել է (1991-1994թթ.) Լաչինի, Մաֆյանի, Սվառասի, Գորիսի և Կապանի սահմանների պաշտպանական մարտերին: 1991-95թթ. սովորել է ավարտել է Գորիսի «Այունիք» ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը, միաժամանակ մարզել է թվով 100-120 պատանիների և աղջիկների՝ արեւելյան մարտարվեստով: 1992-93թթ. նկարահանել է «Արյան հետքերով» գեղարվեստական տեսաֆիլմը՝ նվիրված Արցախյան հերոսամարտին: 1994թ. աշնանը Կապանում՝ Այունիքի օլիմպիականում, ՅՍԿ վազաբարձրությունում դարձել է բացարձակ չեմպիոն: 1996-97թթ. աշխատել է Այունիքի մարզային ոստիկանությունում՝ ուղեկցող խմբի իրամասնատար: 1998թ. Սանկտ-Պետերբուրգում մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի եռամսյա ռեժիսորական և պրոդյուսերական դասընթացներին և ստացել համապատասխան վկայական: 1999թ. հոկտեմբերի 9-ին Այունիքում հիմնադրել է «Այունիք» կինոընկերությունը: 1999թ. հոկտեմբերի 9-16-ը Կապան քաղաքում կազմակերպել է հայ-ռուսական բարեկամության միջազգային 1-ին կինոփառատոնը: 1999-2002թթ. «Այունիք» կինոընկերությունը դպրոցականների, ուսանողների և երիտասարդների շրջանում իրականացրել է մշակութային, սպորտային, արվեստի վերաբերող 130-ից ավելի միջոցառում: 2002թ. սեպտեմբերի 26-ին Այունիքում հիմնադրել է «Այունյաց արծիվներ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը (www.hayocartsivner.am): 2010թ. հունվարի 27-ին երեւան քաղաքում հիմնադրել է «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը (www.hayocartsivner.am): 2010թ. փետրվարից մինչև 2012թ. նոյեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության 300 համայնքում հիմնադրել է «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության 300 մասնաճյուղ-գրասենյակ: Հիմնադրել է՝ 26.04.2003թ.՝ «Նժդեհյան մրցանակ» անվանյա մրցանակաբաշխությունը, 16.05.03թ.՝ Գ.Նժդեհի անվան կարատեի մանկապատանեկան ամենամյա բաց առաջնությունը, 22.04.04թ.՝ «Լեռնահայաստանի արծիվ» ոսկյա հուշանդամ, 09.06.05թ.՝ «Ռազմաօդային հանրապետության ծրագրերի իրականացման կենտրոնը», 09.06.05թ.՝ «Այունիքի ուսանողների միությունը», 27.01.10թ.՝ «Հայոց արծիվ» ոսկյա հուշանդամ: 2005-09թթ. սովորել է ավարտել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը՝ «Փրկարար գործ» մասնագիտությամբ: 2007թ. հուլիսի 14-ից աշխատում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար: 2008-09թթ. սովորել է ավարտել է Եվրոպայի խորհրդի քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը: Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի անդամ է: Քիչ-քիչ մեծ միջազգային հանրագիտակցային պատվավոր անդամ է: Հոտոկան կարատեի ֆեդերացիայի անդամ է, ունի սեւ գոտի: Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի կողմից պարգևատրվել է Հնորիակազմերով (15.12.2008թ., 21.08.2011թ.): Պարգևատրվել է քսանից ավելի մեդալներով, հուշանդամներով, բազմաթիվ պատվոգրերով: Պահեստազորի փոխգնդապետ է: Մի շարք հասարակական, քաղաքական հոգևածների հեղինակ է: Ամուսնացած է, ունի երեք զավակ:

ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Սրբի եւ բանականության հրամայականով

ԳՈՐԾԸՆԵՐՆԵՐԻ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՌՈՒՋԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Գրող, հրապարակախոս, բնության եւ հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ

Ասում են՝ լեռնային գոտում ապրողները ժառանգում են լեռների իմաստությունը, զորությունը ու կայունությունը: Սյունյաց աշխարհը հայոց լեռնաստանի թագն է եղել միշտ, եւ պատահաբար չէ, որ մեր բազմախորհուրդ նախնիներն այդ լեռների բարձունքներին են վստահել հնամյա Քարահունջի տիեզերական ներկայությունը:

Սյունիքը տվել է տալու է չպարտվող առաջնորդների սերունդ, որոնց վերաբերմամբ, հաճախ սկիզբ առնելով որեւէ փոքրիկ գյուղից, ծավալվել են համայն հայության աշխարհագրական տարածքներում՝ զարմանք, հիացմունք եւ հավաքականության ուժ ներարկելով ժամանակի ու գալիք սերնդի ապրողներին: Այդպիսին է լինում նախնայաց ժառանգությունն իր գեղի մեջ կրող հայը, ինչպիսին է այսօր Սյունիքում ծնված անձնավեր հայրողին՝ Խաչիկ Ասրյանը: Թող ոչ մեկիդ հոգում հայրության փոխարեն զարմանքի, խանդի ու կասկածամտության զգացումը զուլու չբարձրացնի, որովհետեւ հետագա պարզաբանումների եւ ուսումնասիրությունների ընթացքում առավել քան համոզվեցի, որ հայը հազարամյակների միջով անցնելով, արհավիրքներին դիմագրավել է հենց Խաչիկ Ասրյանների շնորհիվ. թող որ հախուռն ու անմիջական,

սակայն բյուրեղյա մաքրությամբ ու նվիրվածությամբ, ամեն վայրկյանը հայրենիքի համար օգտակար գործ կատարելու պատրաստակամությամբ: Եվ սա է պատճառը, որ հայրուհավոր ակնարկների ու հրապարակագրությունների, «Շուշի» վիպերգի հեղինակս, որ խոնարհում ունեն հայոց գեղի բնատուր ուժի առաքելության հանդեպ, վերջին տարիներին փնտրում էի անաղարտ մնացած ներկա հայրենատերերի եւ, որ ծանոթանալով Խաչիկ Ասրյանի գործունեության հետ՝ հասկացա, որ մենք հուսահատվելու եւ մեր մարդկային արժեքների վրա կասկածելու իրավունք չունենք հենց գեղի հրամայականով: Ասրյանն իմ կողմից առավել քան ճանաչում ստացավ «Չայոց արժիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության գործունեության շնորհիվ: Առաջին անգամ, երբ հեռուստատեսությամբ լսեցի նրա ելույթը՝ մշակութային, հայրենասիրական, բարոյադաստիարակչական, սպորտային ոլորտների աշխատանքների վերաբերյալ եւ հետո վերջում հնչեցրած իր իսկ խոսքերն ու կոչերը, անմիջապես զուգահեռներ անցկացրեցի Նժդեհյան ոգեկոչումների հետ, ապա մտովի ժպտալով, ինքս ինձ ասացի. «Սա վերջի սկիզբն է»: Չետաքրքրությունն ինձ առաջնորդեց «Չայոց արժիվներում», ուր հետո պիտի իմանայի, որ Խաչիկը ծնվել է 1970 թվականի փետրվարի 13-ին՝ Գորիսում, դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել խորհրդային բանակ, 3 տարի ծառայել Չեռասկո արեւելքում եւ վերադարձել է պատերազմի դժգույն իրականության մեջ: Չայրենաշունչ երիտասարդի վրա ծանր տպավորություն են թողել ազատագրական պատերազմի մասնակից, զոհված իր հայրե-

ն ա կ ի ց ն ե Ր ի կորուստները, ակամանե տե-րից վնասված տներն ու մարդկանց հուսահատ դեմքերը: Չենց այդ օրերին էլ 21-ամյա երիտասարդը ձեռնամուխ է եղել մարտական ջոկատ ստեղծելուն եւ հավաքագրել է պատանիներից եւ երիտասարդներից կազմված «Նժդեհյան գայլախումբ»:

Չենց այդ տարիներին էլ՝ 1992 թվականին, պատերազմի ծանր տպավորության ու կռվող ջոկատների հերոսականության հիշողությունը չկորցնելու համար Ասրյանը նկարահանում է «Արյան հետքերով» փաստավավերագրական ֆիլմը: Այնուհետեւ Կապանում հիմնադրում է «Սյունիք» կինոընկերությունը: 2002 թվականին բազում գործերի հեղինակ երիտասարդը Սյունիքի տարածքի երիտասարդությանն ակտիվ հասարակական աշխատանքի մեջ ներգրավելու նպատակով ստեղծում է «Սյունյաց արժիվներ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը, որը յոթ տարվա ընթացքում կազմակերպում եւ իրականացնում է 2000-ից ավելի հայրենասիրական եւ ռազմահայրենասիրական միջոցառում: Ասրյանի նվիրումն իր ժողովրդին անհետեւանք չի մնում: Երկրի ղեկավարությունը բարձր գնահատելով նրա արժանիքները, 2007 թվականին նշանակում է ՀՀ սպորտի եւ



երիտասարդության հարցերի փոխնախարար: Չանրապետության ողջ տարածքում երիտասարդության հետ տարվող աշխատանքների մեծ պահանջարկ կար, եւ պարզ է, իր գործի գիտակ նորանշանակ փոխնախարարը ձեռնամուխ է լինում երիտասարդությանը սպորտի միջոցով առողջ սպրելակերպի դաշտ ներգրավելուն:

Այցելելով հանրապետության մարզեր ու գյուղեր՝ առաջին հերթին նա ծանոթանում է անգործության մատնված երիտասարդության ներուժին: Ժողովուրդը հայելու նման է, արագ արտացոլում է այն, ինչ տալիս եւ իրեն: Ամենուր, որտեղ կայանում են հանդիպումները, մարդիկ հավատում եւ յուրաքանչյուր ակտիվությամբ են հանդես գալիս կազմակերպած միջոցառումների ժամանակ: 2010թ. խնդիր է առաջանում համախմբել հանրապետության ողջ տարածքի հայրենասեր հասարակությանը, եւ Ասրյանը ձեռնամուխ է լինում նոր «Չայոց արժիվներ» կազմակերպություն ստեղծելուն: Ընդամենը 3 տարվա ընթացքում անհավատալիորեն մասնաճյուղե-

Չայրենիքին նվիրվելը նրա համար կենսակերպ է

ՄՅԵՐ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

Սովորաբար դժվար է լինում խոսել այն մարդու մասին, ում հետ մտերիմ ես, ում հետ ճանապարհ ես անցել, ում ճանաչում ես ոչ միայն դու: Այս հանգամանքները կաշկանդում են քեզ, մտավախություն առաջացնում, որ քո ասած կամ գրած խոսքը կարող է սուբյեկտիվ ընկալվել, բայց...

Եվ, այնուամենայնիվ, սրանով հանդերձ, օգտվում եմ ընձեռված առիթից՝ հնարավորին չափ ներկայացնել մի մարդու, ով ընկեր, հայրենակից լինելուց բացի նաեւ անհատականություն է ու քաջածանոթ հանրությանը: Այս իրողություններն են հենց, որ ինձ թույլ են տալիս աներկբա ու անվարան խոսել բոլորին հայտնի Խաչիկ Ասրյանի մասին:

Նրա անունը մեզանում շրջանառվել է դեռեւս 1990-ական թվականներից՝ առնչվելով Արցախյան ազատամարտին: Չետագայում նրա ակտիվ հասարակական գործունեությունը հայտնի էր ողջ մարզում: Այսօր արդեն՝ ողջ հանրապետությունում:

Խաչիկ Ասրյանի գործունեությանը թեւեւ քաջածանոթ էի Սյունիքից, բայց նրա հետ անմիջական շփում ունեցել եմ 2010 թվականին, երբ մի առիթով գտնվում էի ՀՀ երիտասարդության եւ սպորտի նախարարությունում: Նրա աշխատասեղանի ըն-

դունարանը մարդաշատ էր, որտեղից այցելումները դուրս էին գալիս գոհունակ: Չասկացա, որ սյունեցիներին քաջածանոթ Խաչիկ Ասրյանը նոր պաշտոնում մնացել է նույն անմիջական ու հասարակ, եռանդուն ու գործունյա մարդը, եւ որ նոր պաշտոնը նրան չի փոխել: Իսկ հետագայում, երբ արդեն նրա հետ անմիջականորեն էի շփվում «Չայոց արժիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության հավաքների, հանդիպումների, միջոցառումների ժամանակ, խորապես համոզվեցի դրանում: Այն եռանդը, այն էներգիան, այն հավատը, այն աշխատասիրությունն ու պատասխանատվությունը, որ ունի Խաչիկ Ասրյանը, յուրահատուկ է միայն իրեն եւ բնորոշ է միայն իրեն: Նրա խոսքը համոզիչ է, ներգործող, վարակիչ: Եվ դա գալիս է նրա ներքին հավատից, համոզմունքից, ինչը եւ փոխանցվում է լսողին, նրա կողքին կանգնածին, նրա գաղափարի հետևորդին: Իսկ նրանք ոչ միայն տասնյակ հազարավոր երիտասարդներ են, ուսանողներ, այլև՝ կյանքի երկար ճանապարհ անցած մարդիկ: Ի՞նչն է գրավում եւ այնպես ներշնչում մարդկանց, որ առանց վարանելու գնում են նրա հետևից, միանում նրա շարժմանը, նրա ստեղծած կազմակերպությանը: Միանշանակ՝ այն հավատը, որը վարակիչ է եւ համոզիչ, այն նվիրումը, որը բոլորանվեր է ու անմնացորդ, այն գործելաձևը, որը

խիստ անհատական է: Գուցե նաեւ սա է պատճառը, որ մերօրյա խաթարված արժեհամակարգում հայրենիքը, հայրենասիրությունը, երկիրը, նրա սիմվոլ-խորհրդանիշները պաշտամունքի են հասցվել Խաչիկ Ասրյանի կողմից՝ փոխանցվելով բոլորին, ովքեր միանում են նրան:

Անկեղծ լինեմք եւ խոստովանեմք, որ չկա որեւէ մեկ ուրիշը, ում ստեղծած մարդային կառույցն այնքան կհզորանա՝ դառնալով հանրապետական կառույց: Դա հաջողվել է միայն Խաչիկ Ասրյանին, ում ստեղծած «Սյունյաց արժիվները» հետագայում դարձան «Չայոց արժիվներ»: Ընդամենը երեք տարվա ընթացքում հանդիպումներ է ունեցել հանրապետության բոլոր մարզերի 500 համայնքում, ստեղծել է ավելի քան 300 մասնաճյուղ-գրասենյակ: Ամենուր նրան ընդունում են խանդավառությամբ, ոգեւորությամբ, եւ ամենուր նա սպասված է ու մշտադա: Չի եղել հարց, որ անպատասխան թող-



նի, չի եղել խնդիր, որ անարձագանք ու անհետեւանք թողնի, չի եղել խնդրանք, որ անտեսի:

Այս ամենը, անշուշտ, կարելու է Խաչիկ Ասրյանի համար, բայց այն, ինչ նա անում է հայոց բանակի սպայի եւ զինվորի ոգին անընդհատ մարտունակ պահելու, հավատը՝ անսասան, անհնար է գերազանհատել:

Ինչ էլ ասեմք, ամենակարելուրը եւ ամենագլխավորը, որ արել եւ անում է սպորտի եւ երիտասարդության փոխնախարար Խաչիկ Ասրյանը, սերնդի ոգին բարձր պահելն է: Լինելով կրողը եւ ժառանգորդը Լեռնահայաստանի Սպարապետ Գարեգին Նժդեհի գաղափարախոսության՝ նա իր գործունեության լեյտմոտիվը դարձրել է հայրենիքը,

հայրենասիրությունը, երկրի, հողի հանդեպ պաշտամունքը, երկրի սիմվոլների հանդեպ խոնարհումն ու երկրպագումը, քանզի առանց դրանց անհնար է կերտել այն պետությունը, որը երազում ենք, ունենալ այն հայրենասեր սերունդը, ում վրա է դրվելու երկրի ապագան:

Խաչիկ Ասրյանի գործունեությունը, անշուշտ, զմահատվում է ըստ արժանվույն: Վկան՝ «Չայոց արժիվներ» հզոր կազմակերպությունը, որ իր շարքերում տասնյակ հազարավոր նվիրյալներ է ընդգրկում, վկան՝ երկրի նախագահի գոհունակությունը եւ դրվատանքի խոսքերը նրա հասցեին:

Որպես սյունեցի՝ պատիվ է ինձ համար լինել Խաչիկ Ասրյանի հայրենակիցը, ընկերը, համախոհը, բայց նաեւ պատիվ է ունենալ նման հայրենակից, ով սյունյաց լեռների արժիվների անկտրում ոգով լեցուն է, սյունեցու անսասան հավատով ու սիրով տոգորված, հայրենասիրությամբ ու հայրենապաշտությամբ վարակում է բոլոր նրանց, ովքեր առնչվում են նրա հետ, ովքեր ընդունում են նրա սկզբունքները եւ ովքեր հավատում են հայրենասիրության ու հայրենաշինության նրա դավանանքին, ում գործունեությունը ոգեւորում է բոլոր նրանց, ում համար հայրենիքին, երկրին եւ երկրի նախագահին նվիրվելը կենսակերպ է ու մտածելակերպ:

ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

ԽԱԶԻԿ ԱՍՐՅԱՆ. «Իմ հպարտությունն իմ հզոր հայոց պետականությունն է»

Հարցազրույց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ Խաչիկ Ասրյանի հետ

Սկզբը՝ էջ 8

սին: Շատերը պարզապես գոյություն չունեն՝ միայն թղթի վրա:

– Շատ լավ հարց տվեցիք: Իմ կարծիքը

հանրապետությունում գործող հասարակական կազմակերպությունների մասին բնավ էլ նպաստավոր չէ, եթե չասենք՝ բացասական: Որովհետև դրանք քաղաքացիական հասարակության ձեւավորման գործում լուրջ դերա-

կատարություն պիտի ունենան, ինչը, ցավոք սրտի, բացակայում է: Եվ եթե մարդիկ, մարդկանց որեւէ խումբ որոշում են հասարակական գործունեություն ծավալել, նրանք չպիտի ձեռքները ծալած նստեն՝ աչքները զցելով ինչ-

որ դրամաշնորհների: Քանզի բոլորս քաջատենյակ ենք դրանց ծագման մասին, եւ թե դրանք ինչ նպատակներով են տրվում: Դա վարձատրվող աշխատանքի է նմանվում, մասնավոր երբ օտարերկրյա կազմակերպությունների կողմից են տրամադրվում: «Հայոց արծիվները», ինչպես վերը նշեցի, հասարակական հիմունքներով ծառայում է մեր պետությանը, ընդ որում՝ ինչպես համոզվեցինք, նրա ողջ տարածքով մեկ: Իմ տվյալներով՝ հանրապետությունում 5 հազարից ավելի գրանցված հասարակական կազմակերպություն կա, եւ խորհուրդ կտայի պետեզիստրում գրանցված հասարակական կազմակերպություններին, որոնք իրականում ստեղծվել են դրամաշնորհներ ձեռք գցելով եւ իրենց գրասենյակները վերանորոգելով ու շքեղացնելով, ամհապաղ լուծարվել: Դրանք չեն ընդունվում հասարակության կողմից: Իսկ այն ՀԿ-ները, որոնք իրականում լուրջ ծրագրեր են իրականացնում, անկախ նրանից՝ դրամաշնորհ կլինի, թե՛ ոչ, նրանց գործունեությունը միայն ողջունելի է:

– Ձեր ղեկավարած կազմակերպության մասին, ի՞նչ կարեւոր հարց չտրվեց:

– «Հայոց արծիվները» շահույթ չիետապնդող կազմակերպություն է, այսինքն՝ այն բիզնես նախագիծ չէ, բայց կազմակերպությունն ունի համակիրներ, նվիրյալներ, ովքեր աչքի առաջ ունենալով նրա իրականացրած գործերը, աջակցություն են ցուցաբերում, նրա գործունեությունն ընդլայնելու ու ակտիվացնելու նպատակով: Առանձնահատուկ ուզում են մշել գերագույն գլխավոր հրամանատար, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի բացառիկ դերակատարությունը կազմակերպության կայացման եւ հզորացման գործում՝ նրա հիմնադրման օրվանից մինչեւ այսօր: Էլի կան շատ լուրջ անհատներ՝ պետական եւ քաղաքական, հասարակական գործիչներ, ովքեր օժանդակություն են դրսեւորել եւ դրսեւորում են՝ կազմակերպության հետ պահպանելով սերտ ու անշահախնդիր հարաբերություններ: Ուղղակի ուզում են երախտագիտություն հայտնել բոլորին, նրանց, ովքեր գեթ մի անգամ, մի քանի անգամ, միշտ աջակցել ու աջակցում են «Հայոց արծիվներին»:

Կարճ հարց ու պատասխան

– Ինչպե՞ս կուզենայիք վերնագրել մեր գրույցը:

– Մեր գրույցը, շատ կուզենայի, որ որպես վերնագիր կրեր իմ կոչերից, պատգամներից մեկը՝ իմ հպարտությունն իմ հզոր հայոց պետականությունն է:

– Ի՞նչն է վշտացնում Խաչիկ Ասրյանին առօրյա կյանքում:

– Ինձ ավելի շատ վշտացնում է նախարարության իմ ենթակայների եւ «Հայոց արծիվներ» կազմակերպության անդամների՝ իմ կողմից տրված հանձնարարությունների թերի կատարումը:

– Ազատ ժամանակ ունենո՞ւմ է Խաչիկ Ասրյանը, եթե այո, ապա ինչո՞վ է զբաղվում:

– Ազատ ժամանակ, որպես այդպիսին, եթե լինում է, տրամադրում են սպորտին, շատ լուրջ սպորտով եմ զբաղվել եւ զբաղվում եմ:

– Ցեղակրոն ուսմունքից ո՞ր դրույթն է Ձեզ ավելի հոգեհարազատ:

– Ցեղակրոն ուսմունքից ամենահոգեհարազատը Գարեգին Նժդեհի պատգամներն են, չէի առանձնացնի որեւէ մեկը, որոնցով միշտ ձգտել եմ առաջնորդվել եւ առաջնորդվում եմ:

– Այն ի՞նչն է, որ կյանքում ոչ մի բանի հետ չես փոխի:

– Աստծո, ընտանիքիս, ազգիս, հայրենիքիս, իմ պետության հանդեպ հավատարմությունն ու պատասխանատվությունը:

– Ի՞նչն էք ավելի շատ զննահատում մարդու մեջ եւ ի՞նչն է առավել արգահատելիմ Ձեզ համար:

– Մարդու մեջ առավել զննահատում եմ անկեղծությունը, շիտակությունը, աշխատասիրությունն ու պատասխանատվության բարձր զգացումը եւ արդարությունը: Ինձ համար արգահատելի են դավաճանությունը, կեղծիքն ու սուտը:

– Եթե կրկին սկսեիք Ձեր կյանքը, ո՞ր բացթողումը կշտկեիք, ի՞նչ սխալ կարբազդեիք:

– Անկեղծ ասած՝ եթե մի անգամ էլ Աստծո կողմից տրվեր ապրելու իրավունք, ես կանեի այն, ինչ հիմա եմ անում՝ առանց որեւէ վերապահումի եւ բացառության:

Աստված բոլորիս պահպան:

Ձրույցը՝ ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ



18 դեկտեմբերի 2011թ., «Հայոց արծիվների» փարենուպի երեկոն



«Հայոց արծիվների» հերթական միջոցառումը Ն գործարանում



«Հայոց արծիվների» Ջրահովիտի միջնակարգ դպրոցում, 1 սեպտեմբերի 2011թ.



Հերթական ռազմաօդային հարձակումից հետո՝ կրակային պարասպրտության փեսքով



Սերժ Սարգսյանի այցը «Այունյաց արծիվներ» ԵԿԻ-ի կապանյան արծվաբուն, 1 փետրվարի 2007թ.

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Արագորեն մարող Ներքին Հանդի ուշադրություն է աղերսում հայրենի կառավարությունից

Սկիզբ է 1

վերելում նշեցին) բնակվում է վթարային շենքում, դպրոցում էլ ուսանում է յոթ աշակերտ:

Ժողովրդագրական ճգնաժամ ապրող գյուղում (ըստ ծխամատյանների՝ 91, փաստացի՝ 75 բնակիչ), ինչպես եւ կարելի էր ակնկալել, գյուղացին օտարվել է հողից: 115հա վարելահողը (որից 35 հեկտարը՝ պետֆոնդի հող)՝ բարենպաստ պայմաններում գտնվող, տարիներ շարունակ չի մշակվում, չի օգտագործվում անգամ 10հա ոռոգելի հողատարածքը: Այլեւս թփակալած այդ հողերի մշակումը, եթե նույնիսկ կամեցողներ հայտնվեն, լուրջ դժվարություն է ներկայացնում: Նաեւ այն պատճառով, որ համայնքը գյուղտեխնիկա չունի (եղած երեք տրակտորի վերականգնումն անհնարին են համարում): Ի դեպ, ծովի մակարդակից 780մ բարձրության վրա գտնվող այդ հողատարածքները ժամանակին հնձվում կամ բերք էին տալիս տարեկան երկու անգամ: Այդ հողերի մշակման (նաեւ մերձակա արոտավայրերի) շնորհիվ խորհրդային տարիներին գյուղում պահվում էր 350-400 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Ծերացած եւ արագորեն մարող այդ գյուղում, որքան էլ ցավալի է ու զարմանալի, հողն այլեւս արտադրամիջոց չէ, ապրուստի միջոց չէ, աշխատատեղ չէ: Նույնիսկ ոչ բոլոր տնամերձերն են (ընդամենը՝ 3հա) մշակվում:

Գյուղում տարածված է մեղվաբուծությունը, որ դարձել է գրեթե բոլոր ծխերի զբաղվածության բաղկացուցիչը: Մոտ 500 մեղվաբուծատանիք ունեցող գյուղն այսօր բարձրակ մեղր արտադրող համայնքի համբավ է ձեռք բերել:

Մեկ այլ ուշագրավ երևույթ էլ հանդիպեցինք Ներքին Հանդում: Գյուղի միակ տիպային անասնագործ՝ կառուցված խորհրդային եպոխտի վերջին տարիներին, ի տարբերություն մարզի մյուս գյուղերի համանման կառույցների, գյուղապետի կողմից չի կողոպտվել եւ կանգուն է մինչեւ հիմա: Նման համալիրները մարզի գյուղերի մեծագույն մասում 1990-ականների սկզբին մեր գյուղապետերն ավազակաբար թալանեցին (այդ օրերի գյուղապետերի մի մասն այսօր էլ շարունակում է թառ նստել տվյալ համայնքի շալակին):

Որքան էլ ցավալի է՝ հետպատերազմյան քսան տարում սահմանադուռ այդ գյուղում պետական բյուջեով որեւէ խնդիր չի լուծվել: Ամերիկյան մի ծրագրով (12 հազար դոլար արժողությամբ) ոռոգման ջուր է հասցվել գյուղի վերին թաղամասի տնամերձեր: Արտասահմանյան մեկ այլ ծրագրով էլ (17 հազար դոլար արժողությամբ) խմելու ջրատարն է հիմնանորոգվել: Համայնքային բյուջեով էլ (տարեկան 4.1 մլն դրամ) հազիվ գյուղապետարանի հինգ աշխատողի աշխատավարձն է ապահովվում: Սահմանամերձ գյուղի կարգավիճակն էլ վաղուց չի տարածվում Ներքին Հանդի վրա, թեւ գյուղը պետական սահմանից 300-400մ հեռավորության վրա է գտնվում:

Մարզկենտրոնից 36կմ հարավարեւելք գտնվող Ներքին Հանդ, շնորհիվ Կապան-Մեղրի այլընտրանքային ճանապարհի, հիմա կա-



րելի է հասնել առանց դժվարության: Ադրբեջանի երբեմնի Ջանգելանի շրջանի սահմանագլխին գտնվող բնակավայրը ներկայիս տեղում վերընձյուղվեց 1980-ականներին: Կապանի շրջանի այդ օրերի ղեկավարությունը գյուղը վերին սարավանջից անմիջապես սահմանադուռ իջեցնելով՝ ձգտում էր ամրապնդել հայ-ադրբեջանական սահմանը: Հայաստանի կառավարության 1972թ. նոյեմբերի 21-ին N683 որոշմամբ ներկայիս գյուղատեղում «Գետափ» անվանյալ հանդամասում, կառու-

ցեցին 21 երկբնակարանային շենք, 200 տեղանոց ակումբ, 192 տեղանոց դպրոց եւ ինժեներական ենթակառույցներ՝ ջրագիծ, կոյուղի, կաթսայատուն եւ այլն: Այդ տարածքը, իրոք, ռազմավարական նշանակություն ուներ: Ներքին Հանդը յուրօրինակ վահան էր մի ամբողջ ենթաշրջանի համար, որտեղ Ծավ, Շիշկերտ, Սրաշեն, Շիկահող, ճակատեն գյուղերն են: Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ Կապանի ղեկավարությունը ճշգրիտ հաշվարկ ու կամխատեսում էր արել ժամանակին:



Գյուղը, սակայն, ռազմավարական նշանակությամբ չէ միայն, որ աչքի է ընկնում: Ինչպես արդեն նշել ենք, Ներքին Հանդը բացառիկ բարենպաստ բնակիչմայական պայմաններում է գտնվում: Գյուղի աչեգրով՝ մոտ 1200մ երկարությամբ, ձգվում է սրբազան տոհմերի շարքը (Սոսիների հանրահայտ պուրակի մի մասն է), իսկ տոհմերի հովանու ներքո իր մեղմ ընթացքն է շարունակում Բասուտա գետը, որ վերին հատվածում նաեւ Շիշկերտ ու Ծավ է կոչվում: Շիշկերտ եւ Մագրա վտակներից սկզբնավորված գետը Ծավ գյուղից ներքե իր մեջ է ներառում Մթնաձոր եւ Կուճի վտակները՝ Ներքին Հանդի տարածքում դառնալով ջրառատ գետ տարվա բոլոր եղանակներին, որը լավագույն հնարավորություն է գյուղի հողատարածքները մշակելու համար: Գյուղից հարավ-արեւմուտք մի ուրիշ հրաշք է՝ Մթնաձորը՝ հավասարը չունեցող անտառահատվածը:

«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը (գյուղապետարանից եւ դպրոցից բացի) գյուղի ներկայիս ընթացիկ կարելու բաղադրիչն է: Արգելոցը, նախեւառաջ, յոթ աշխատատեղ է գյուղի համար: Արգելոցն է, որ պետական հսկողություն է իրականացնում տարածքի բուսական եւ կենդանական աշխարհի պահպանության համար: Արգելոցը երբեմն նաեւ սոցիալական ծրագրեր է գյուղում իրականացնում: Վերջին անգամ՝ 2012-ին, ՊՈԱԿ-ը 5-ական մեղվափեթակ է հատկացրել տասը ընտանիքի, նաեւ թրթուրավոր մեկ տրակտոր նվիրել համայնքին՝ համատեղ օգտագործման պայմանով:

Հայրենի կառավարությունից ուշադրություն հայցող Ներքին Հանդի

փրկության խնդիրը, անտարակույս, սյունիքյան օրակարգի հարցերից է: Իսկ գյուղի փրկության վերաբերյալ դատողություններն ու կարծիքները բազմազան են: Դրանցից մեկը, բնականաբար, գյուղում աշխատատեղերի ստեղծումն է (սկզբնական շրջանում՝ ամսվազն 20 աշխատատեղ): Մարդիկ առաջարկում են նաեւ գյուղ վերադարձնել Արցախյան պատերազմի օրերին այնտեղից (անվտանգության ապահովման նկատառումով) Կապան տեղափոխված գիշերօթիկ դպրոցը (կամ Կապանի գիշերօթիկ դպրոցներից մեկը), մանավանդ որ գյուղի դպրոցի շենքը հիմնականում պահպանվել է:

Գյուղի իրավիճակը գրեթե միանման են գնահատում եւ ստեղծված կացությունից միանման ելք են տեսնում համայնքի ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը, գյուղի հիմնական դպրոցի տնօրեն Դոնարա Սողոմոնյանը եւ «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռուբեն Սկրտչյանը: Նրանց նկատառումները ներկայացնում ենք ստորեւ, բայց գյուղապետ Խաչատուր Բաղդասարյանի մի դիտարկում, այնուամենայնիվ, ուզում ենք առանձնացնել. «Համայնքների խոշորացման կառավարական հայեցակարգը եթե իրականացվի, մեր գյուղի պես համայնքների վերացումը կարագացնի միայն, ուստի եւ շրջանաձուլող այդ կոնցեպցիայից պետք է հրաժարվել: Գյուղը 1960-ականներին մի անգամ արդեն անցել է նման փորձության միջով, որը շատ թանկ է նստել: Երկրորդ անգամ գյուղը չպետք է փորձության ենթարկել, այլապես չի դիմանա»:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ներքին Հանդ, 1906 թվական, փորձություն եւ հաղթանակ

Հատված «Սյունիքը հայ-թաթարական պատերազմում» անտիպ գրքից



ԳՐԻՇԱ ՍՄԲՍՅԱՆ
Կապանի երկրագիտական թանգարանի տնօրէն

Ներքին Հանդ... Փոքր Հանդ... Կարծեք հենց այս փոքրիկ գյուղի վրայով է անցնում թուրքական երկու աշխարհը միմյանց կապող ուղին: 20-րդ դարասկզբին Հանդը չիմական պարիսպ էր այդ ճանապարհին:

Հանդ... նոր անուն: Հին անունն անհետացավ Դավիթ Բեկի պարտությունից հետո, երբ բնակիչները հեռացան անհայտ ուղղություններով: Ըստ Ռոբերտ Էջանանցու՝ հանդ՝ նշանակում է վայր, որտեղ հավաքվում էր գաղթականությունը եւ ապա հեռանում տարբեր ուղղություններով /նկատի ունի թուրքմենչայի պայմանագրից հետո գաղթականների կենտրոնացումն այստեղ/: Տաթևի «Թեթուկում» Հանդը /Հանդի ղիբովշան/ հիշատակվում է 1600 դահեկան հարկաչափով: 1897-ին Ներքին Հանդը ուներ 226 բնակիչ, 1906-ին՝ մի փոքր ավելի:

Արեւելահայաստանի Ռուսաստանին միացումով սկսվում է Փոքր Հանդի մեծ պատմությունը: Ասում էին, որ եկել են իրենց պապերի հայրենիքը: Եկան, ծառ ու քփի մեջ քաքքված եկեղեցի եւ իհն գյուղատեղի նկատեցին այստեղ: Ազատասեր էին, անկախ, անենթակա, անհիշխանասեր եւ հերոսական:

Եկվորները շունչ ու հոգի պարգեւեցին Սքնածորի պրնկին ընկած ավերակներին: Սողունների ու վայրի գազանների հարեւանությամբ գյուղն սկսեց ապրել: Ո՞վ գիտե, զուցե իրոք նախնիների գյուղում էին: Բայց եկվորները բոլորովին ուրիշ մարդիկ էին, մնաց չէին ոչ իրենց հետ ներգաղթածներին, ոչ էլ տեղացիներին: Կարծեք առանձին կատար էին, առանձին մի կղզյակ, որ երբեք չփոխվեցին, այդպիսին մնացին ու մնում են գյուղի ամբողջ պատմության մեջ: Սոսյաց հեթանոս անտառի հարեւանությամբ գյուղը մնաց միայնակ, աշխարհից հեռու, կտրված նույնիսկ մոտակա հայկական բնակավայրերից:

1906 եւ 1918-1920թթ. հերոսական մարտերի մեռնող վկաները զնդակներից խոցված ու վիրավոր սյուններն ու զերաններն էին:

Բասուտայից վեր՝ նեղ ձորա-

կում՝ Սքնածորի պրնկին ծվարած գյուղում, օձերի թագավորություն էր: Մարդն այստեղ ընկերացել էր օձերի հետ: Գյուղի փողոցներում, տների տանիքներում օձերն էին վխտում, իսկ հանդեցին՝ ձուլված նրանց հետ:

Հանդ... Զափից դուրս անտառքեր ենք եղել այդ գյուղի հանդեպ: Գյուղի պատմության նոր եւ նորագույն ժամանակների էջերը լի են արհավիրքներով, բայց եւ հերոսականությամբ: Ինչպիսի՞ն է եղել ավելի խոր անցյալը, ի՞նչ էր մկրտության անունը: Փորձում են կռահել՝ Ստեփանոս Օրբելյանի վկայաբերած հարկացուցակի (Տաթևի վանքի) խորձորն է... բայց դա այլ թեմա է:


Քանի՞ դար առաջ եւ ո՞վ դրեց գյուղի հիմնաքարը. օրինյալ լինի մա, օրինյալ լինեն գյուղը կառուցած բոլոր սերունդները:

Հանդեցու՝ մեզ համար անսովոր մտածողության մասին իր դատողություններն է անում ինքը՝ հանդեցին. «Մերոնց մեծ մասը եկել է Սալմաստի մոտերից՝ Քարազուխ գյուղից, 1826-28-ի ռուս-պարսկական պատերազմից հետո: Մեր նախնիները հռչակված խաչագողեր են եղել: Մերոնց սահման քանդող են համարել: Աչքը թեքես՝ հանդեցին կթանդի հարեւանի ցանկապատը, կյուրացնի՝ ինչն իրենը չէ: Աշխարհում ոչ ոք, ոչ մի համեմար չի կարող համոզել հանդեցուն: Խոսի՛ր նրա հետ՝ ցույց կտա, որ լսում է քեզ, կլռի, բայց իրենը կանի: Վրիժառու են: Եթե վրեժը չեն լուծում, չեն հանգստանում»:

Գույներն ամենեւին էլ խտացված չեն ինքնագնահատականում: Եթե ուրիշ վայրերում լռությամբ տանում էին բռնությունն ու շահագործումը, ապա Հանդում ըմբոստանում, դիմադրություն էին ցույց տալիս, վրեժխնդիր լինում: Սրանք տանել չեն կարող օրենք, պետություն եւ իշխանություն, ուր մնաց բռնություն ու կամայականություն:

«Վրիժառու են: Եթե վրեժը չեն լուծում, չեն հանգստանում...»: Վկան 1902թ. հանդեցի Սաֆարի սպանությունից հետո տեղի ունեցածն է: Լուրը գյուղ հասնելուն պես հանդեցիները զինված «հարձակվեցին իրենց դաշտերում իջած եւ վրաններ խփած բեկերի ու նրանց ծառաների վրա, ծեծեցին, պատռեցին, վառեցին վրանները, եւ սրանք հազիվ ճողոպրեցին... Հանդեցիները դիմեցին դատարան: Մինչ բողոքը տեղ հասնել, նրանք համարժեք քայլերի էին դիմում՝ փախցնում էին թուրքերի անասունները: Կողոպուտի գնում էին զինված, զնում էին դարաններ սարքում, վախեցնում... Չհանգստացան, դիմեցին դատարան: Այնպես, որ թուրքերը սկսել էին վախենալ» (Լ.Հակոբջանյան, Հանդ, էջ 13):

1906-ի ամռանը՝ Ղափանում ընթացող պատերազմի թեժ պահին, Մինջեանում եղավ հավաք, որին



Սոսյաց անտառի փարեցներից մեկը

մասնակցում էր ավելի քան 2000 մարդ՝ ռազմատենչ մինջեանցիներ, շրջակա գյուղերի բնակիչներ, Արաքսի աջ ափից ներթափանցածներ: Մինջեանում, ոչ ավել, ոչ պակաս, «Արքազան պատերազմի» կոչ հնչեց ղափանցիների դեմ: Առանձնահատուկ ելույթներ եղան Հանդի եւ հանդեցիների դեմ:

Իշխան Միրզոյանը գրում է. «...Մեր գյուղի մոտ հարեւան Սանալու գյուղացի Վալբանի Ջավադը, մի քարի նստած, սպասում էր որեւէ հանդեցու: Առաջին պատահածին հայտնեց, որ ինքն ուզում է հանդի պեւ Ավանին, Միրզային ու Խաչատուրին: Հանդիպելու եկան երեքն էլ: Ջավադը խոսեց. «Մինջեանից են գալիս: Ժողով էր: Որոշել են հարձակվել այս կողմերի գյուղերի վրա: Գալու են վաղը չէ՞ մյուս օրը: Գալու են Հանդի վրա: Ասում են՝ որսորդ են, զենք ունեն: 2000 մարդ էր ժողովին մասնակցում: Ալլախը վկա, եւ ժողովում բեկերին լսելիս մազերս բիզբիզ կանգնեցին: Բոլորից կատարողին Նուրի բեկի ելույթն էր: Նա՛ մեր գլխավորը, ասաց, որ Հանդի գրավումը մի քանի ժամվա գործ է, ուրեմն ժամանակ չկրոցնենք ու գնանք այդ անիծյալ գյուղի վրա: Եթե Հանդը գրավենք, մյուս գյուղերը վերցնելու ենք առանց դիմադրության: Ժողովուրդը կռվել չի ուզում, բայց նրանց կքշեն գյուղերի վրա: Կոչ են արել. «Բոլորս դեպի Հանդ...»:

Թուրք բեկերի գլխավոր սպառնալիքները վաղուց էին ուղղվել

Հանդին ու սովորաբար ավարտվում էին. «Դուք էստեղ իյուր եք, դուք Արաքսի են ափից եք, էստեղ անելիք չունեք, զնացեք այնտեղ, որտեղից որ եկել եք...»:

Ժամանակ չկար, Ջավադը ուզում էր աննկատ մնալ. «Ես գնացի, հազար աչք կա հիմա մեզ մայրող: Կարծում եմ՝ կգան այս գիշեր, կան էլ՝ ծեփն: Ալլախը ձեզ օգնական», - ավելացրեց ու վազեց Սանալու տանող ճանապարհով:

«Դրոշակը» Հանդի վրա հարձակման օրը նշում է Ղարաբաբա /Տանձատափ/ մելիքական գյուղի վրա հարձակման օրը, որն օգոստոսի 6-ն է: Ա՛-Դոն նշում է 5-ը /Ա՛-Դո, Հայ-թուրքական ընդհարումները Ջանգեզուրում 1905-1906թթ., Երեւան, 1996թ., հրատարակությանը եւ խմբագրությանը Շչորս Դավթյանի/: Ա՛-Դոն իրավացի է: Եթե գյուղը դիմադրել է երկու օր, իսկ օգոստոսին վրա է հասել օգոստոսի 7-ի լուսաբացին, կնշանակի, որ հարձակումը եւ շրջափակումը տեղի են ունեցել օգոստոսի 5-ին: Ինչ վերաբերում է բուն ճակատամարտին, այն տեւել է ավելի քան 11 ժամ:

Տագնապի իրացմանային համագարկերը խախտեցին Սքնածորի անդրորը: Գյուղում ու մոտակայքում գտնվողները սուրհանդակ դարձան ու վազեցին անտառ, արոտ, դաշտ, խոտհարք, արտ, գետեզերք: Տարածվում էին կանչերը, փնտրում էին, պահանջում եղած-չեղածը հավաքել ու գյուղ վերադառնալ:

Հանդը... Փոքրիկ Հանդը մի ակնթարթում վերածվեց ամրոցի: Ծանկուտի խորքում, արեւկող լանջին թառած գյուղում պարտադրված էին գործել «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» կարգախոսով, որն Աթա Տեր-Գրիգորյանի շուրթերով հնչեց. «Արյան դեմ արյուն, վնասի դեմ վնաս»:

Ինչ-որ մեկի ցանկությամբ բնակչության հաշվառում կատարվեց: Չվատահեցին, երկրորդ անգամ նույնը կրկնեցին, ոչ ոք դրսում չափի մնար: Խուճապ, ինչ-որ տեղ, այնուամենայնիվ, կար: Առաջարկ եղավ գյուղից դեպի Ծավի կողմերը հեռանալ, սակայն խոսողի ծայրը մարեց ցասումի ընդհանուր աղմուկի մեջ: Ու այդ ժամանակ խոսեց Տաթևի հոգեւոր դպրոցն ավարտած տեղ Ավան Տեր-Գրիգորյանը. «Ժողովուրդ, տեսնում են, մոռանում եք, որ մեր պապերի գերեզմանները չափտի թողնենք. մի՛ մոռացեք... Եկել է ժամանակը, որ թուրք բեկերը հավատան, թե ինչի ենք ընդունակ մենք: Չվախենաք, զինվեք ու ինչով կարող է, կռվեք անվախ սրտով: Աստված մեզ ամուսն չի անի, մա տեսնում է մեզ, լսում է մեր աղոթքը... մեզ օգնության են գալու»:

Մարդիկ հանդարտվեցին, ու նոր միայն կայացավ Հանդի երեւելիների ժողով: Ժողով. ավելի ճիշտ՝ ռազմական խորհուրդ, որի որոշումը մի ավելորդ անգամ համոզում է մեզ հանդեցիների անկախության, սառնասրտության, մինչեւ

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԸ

ՆԵՐՔԻՆ ԴԱՆՂ հայացք Ներսից



ՆԵՐՔԻՆ ԴԱՆՂ ԿԱՄԱՅԻՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արդեն 15 տարուց ավելի է, ինչ համայնքի ղեկավարն եմ: Անցած տարիներին հնարավորինս փորձել եմ բնակիչներին կապել գյուղի հետ, ստեղծել որոշակի պայմաններ գյուղից չհեռանալու համար: Այսօրվա դրությամբ գյուղում ապրում է 91 մարդ, դպրոց է հաճախում 7 երեխա: Գյուղում կա 34 աշխատատեղ (դպրոց, Շիկահողի արգելոց, գյուղապետարան): Մարդիկ զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Ունենք 72 գլուխ խոշոր, ոչխար գյուղացիները չեն պահում: Վերջին մեկ ամսում խոզերի անկում է նկատվել՝ աֆրիկյան ժանտախտի պատճառով, որի բուժման

ճանապարհները դեռ չեն գտնվել: Հինգ տարի առաջ գյուղում նույն հիվանդությունից սատկել է գյուղի խոզերի ամբողջ գլխաքանակը, որի փոխհատուցումը մինչև օրս գյուղացիները չեն ստացել: Գյուղում բնակվում է ընդամենը երեք երիտասարդ, վերջին անգամ գյուղում հարսանիք է եղել 2012թ. հունիսի 21-ին՝ իմ տղայի հարսանիքն էր, և ամուսնանալուց հետո, ինչպես բոլոր երիտասարդ ընտանիքները, հեռացել են գյուղից՝ աշխատանք չունենալու պատճառով: Արդեն մի քանի տարի է՝ գյուղում առաջընթաց չի նկատվում, մարդկանց թիվը գնալով պակասում է, բնակելի տների դռները փակվում են: Միայն 2012թ. գյուղում երեք ծուխ է մարել: Միակ լուսավոր կետն այն է, որ չունենք ոչ ոռոգման, ոչ էլ խմելու ջրի խնդիր: Յուրաքանչյուր բնակարան ունի մշտական խմելու ջուր:

Տարիներ առաջ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եկել էր մեր գյուղ, տեսել գյուղի վիճակը և յուրաքանչյուր ընտանիքի տրամադրել 200 հազար դրամ՝ բնակարանները վերանորոգելու համար (պատերազմի ժամանակ տները հրկիզվել էին): Յուրաքանչյուր ընտանիք ունի 2-7 խոշոր, որոնց կաթը մայիսից մինչև հունիս մթերում են:

Ներքին հանդեպները հիմնա-

կանում մշակում են տնամերձ հողամասերը: Վարելահողը 115 հեկտար է (այդ թվում՝ պետֆոնդի հող) և միայն ծառայում է խոտհարքի համար:

Գյուղը կործանումից փրկելու միակ ճանապարհն աշխատանք էր ստեղծել: Միայն այդ դեպքում գյուղը որոշ չափով ուղքի կկանգնի: Մարդկանց մի զբաղմունքն էլ մեղավբուծությունն է: Գյուղում 500 փեթակից ավելի մեղու կա: Հավելյալ նաև, որ սոսիների պուրակը նույնպես դեռ է խաղում գյուղի պահպանման գործում: Շատ ենք լսել, որ գյուղերը զբաղացնելու համար ծրագրեր են իրականացնելու, ներդրումներ են անելու, բայց ոչինչ մեր գյուղ չի հասնում, պետության տրամադրած լրավճարն էլ միայն գյուղապետարանի աշխատողների աշխատավարձին է հերիքում:

Ես համագյուղացիներիս չեմ մեղադրում, եթե նույնիսկ նրանք ցանկանան մշակել իրենց հողատարածքները, ապա կկանգնեն լուրջ խնդիր առջեւ, քանի որ չունենք համապատասխան մեխանիզմ, որով հնարավոր կլինի իրականացնել այդ աշխատանքները: Վստահ եմ պայմաններ լինելու դեպքում մարդիկ կվերադառնան իրենց հայրենի օջախները:



ՈՌԲԵՐՏ ՄՎՐՏՅԱՆ «ՇԻԿԱՀՈՂ» ԱՎԵՊԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ» ԴՈՍԿԻ ՎԻՍՏՐԵՆ

Ներքին Հանդ գյուղի այսօրվա վիճակն ինձ շատ է մտահոգում: Գյուղի վարչական տարածքի միջով է ձգվում (1200մ) սոսիների նշանավոր պուրակը, որը մինչև 2004 թվականը պատկանում էր Կապանի անտառտնտեսությանը, այժմ հետևի կառավարության 2004թ. հուլիսի 15-ի 1044-Ն որոշումով մտցվեց «Շիկահող» պետական արգելոց» ԴՈՍԿԻ կազմի մեջ՝ որպես արգելավայր: Այսօր արդեն Ներքին Հանդ գյուղից մեզ մոտ յոթ մարդ է աշխատում: Փորձում ենք մեր հնարավորությունների չափով աջակցել գյուղին, գյուղացիներին: Ներքին Հանդը Սյունիքի սահմանամերձ գյուղերից է, այն սահմանից հեռու է ընդամենը 300-400մ: Ցավալի է, որ գտնվելով գրեթե սահմանի վրա՝ գյուղն օր օրի դատարկվում է, և դրա հետ մեկտեղ թուլանում է մեր սահմանը: Գյուղի հիմնական բնակիչները ծերեր են, ովքեր, առողջական վիճակից ելնելով, չեն կարողանում մշակել նույնիսկ իրենց տնամերձ հողատարածքները: Միաժամանակ ասեմ, որ այսօրվա դրությամբ գյուղի մյուս բնակիչները գյուղատնտեսությամբ քիչ են զբաղվում, կարծես թե ծուլացել են, հետ են վարժվել, չեն ցանկանում մշակել իրենց բանջարանոցներն ու այգիները: Քանի որ գյուղը Կապանի տարածաշրջանի ամենացածրադիր գոտում է, այդ իսկ պատճառով հենց այստեղ է լինում առաջին բանջարեղենը, կանաչեղենը: Ես միշտ էլ այն կարծիքին եմ եղել, որ այս բնակավայրում ով աշխատի, նա էլ կուտի, քանի որ ամեն պայման կա հողագործությամբ զբաղվելու համար: Ամեն տարի ինձ մտահոգել է նաև գյուղի տների ջեռուցման հարցը, քանի որ տները ջեռուցվում են փայտով: Պետությունն ամեն մի ընտանիքի 8 խորանարդ մետր անվճար թափուկ հավաքելու հնարավորություն է տալիս՝ ծմռանը բնակարանները ջեռուցելու համար: Ամտառներից թափուկ հավաքելու համար գյուղացին դիմում է անտառապահին, նա էլ համապատասխան տոմս է տրամադրում, որով թույլատրվում է անտառից թափուկ հավաքել: Ներքին Հանդի բնակիչները բնակարանը ջեռուցելու համար սոսիների պուրակից երբեք ծառ չեն կտրում, նրանց համար այդ ծառերը սրբություն են: Այսօրվա դրությամբ մտահոգիչ է նաև գիշատիչների (հատկապես՝ շնագայլերի) թվի ավելացումը, դրանք ունեն շատ սուր հոտառություն և ոչնչացնում են արգելոցի մյուս կենդանիներին (նապաստակներ, վայրի խոճկորներ, այծյամներ): Ես դա շատ լուրջ հարց եմ համարում, որին պետք է անհապաղ լուծում տրվի, հակառակ դեպքում կարող ենք կորցնել արգելոցի կենդանական աշխարհի մեծ մասը: Նույն գիշատիչները վնասում են նաև գյուղի ընտանի կենդանիներին:

Ինչքան էլ ցավալի լինի, այսօր Ներքին Հանդը դասվել է վերացող գյուղերի շարքը, և եթե այս տեսնվելով շարունակվի, ապա չենք կարող վերականգնել նախնիներն ունեցա-



ՂՈՆԱՐԱ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ «ՆԵՐՔԻՆ ԴԱՆՂ ԳՅՈՒՂԻ ԻՒՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԴՈՍԿԻ ՎԻՍՏՐԵՆ

Դպրոցում սովորում է 7 աշակերտ, ունենք 12 աշխատող: Նախկինում այստեղ գիշերօթիկ դպրոց է եղել՝ նախատեսված 150 աշակերտի համար: Ես ցավում եմ գյուղի համար, քանի որ չկան երիտասարդներ, չկա հեռանկար: Նույնիսկ չգիտեմ, թե դա ինչ «հիվանդություն» է, որ գյուղացիները, երիտասարդ ընտանիքները չեն ցանկանում այստեղ ապրել, և սա այն դեպքում, երբ կլինան բարենպաստ է, ջուրը մշտապես կա, և մնում է միայն աշխատել, ստեղծել, արարել ու ապրել: Ցավով եմ նայում դատարկված տներին, քանի որ ափսոսում եմ այս բնակա-

վայրը, այս բնությունը, մաքուր օդը: Արդեն չգիտեմ, թե ինչպես կարելի է գյուղի մարումը կասեցնել, վերադարձնել բնակիչներին: Կարող է զարմանալի թվալ, բայց նույնիսկ մեր աշակերտներն են դրականորեն տարբերվում քաղաքի աշակերտներից՝ թե՛ մտածելակերպով, թե՛ կյանքի նկատմամբ ունեցած հայացքով: Շատ կցանկանամ, որ մեր պետությունը որոշ քայլեր ձեռնարկի, որոշ միջոցներ հատկացնի սահմանամերձ գյուղերը (այդ թվում և Ներքին Հանդը) կործանումից փրկելու համար:



Դեպի Ն. Հանդ, դեպի Մթնանոթ



Բառուրա գետի ափին



ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԵՐՔԻՆ ԴԱՆՂ

Գյուղի աշխարհագրական կոորդինատներն են՝ արեւելյան երկայնության 46° 31' 01", հյուսիսային լայնության 39° 02' 28": Գտնվում է Սյունիքի մարզի հարավարեւելյան ծայրամասում՝ Բասուրա գետի ձախ ափին, հանրապետությունում միակ ստացած անտառակի մոտակայքում: Այստեղ է տեղափոխվել բարձրադիր գոտուց՝ երեք տասնամյակ առաջ: Գյուղը վերաբնակեցվել է 1820-ականներին, Իրանի՝ արաբսամերձ Ղարաղաղ գավառից ինքնա-

տեղահանված ներգաղթյալներով, որոնց նախնիները տեղաբնակներ էին: Գյուղի հնագույն անունը կորուսյալ է: Տարածաշրջանի՝ հնագույն Կովսական գավառի՝ Տաթևի վանքին հարկատու 53 գյուղի ցուցակն առերթված է Ստեփանոս Օրբեյանի «Հիշատակաց մատյանում» (1297թ.): Ենթադրելու է, որ գյուղանունը տասներորդարյան Աղաթաղը, Վախտանգաձոր, Դից մայրի, Պողոսի վանք, Բերքնի անվանումներից մեկն է: Հանդ պայմանական անվամբ կոչվել է հավաքատեղի իմաստով: Ռուսատիրությունից առաջ՝ պարսկատիրության ժամանակների ներգաղթյալների համար, բաշխման նպատակով, հանգրվան-

ներ են հիմնվել: Ի տարբերակում՝ Չորք գավառից Վերին Հանդ է կոչվել Կովսականից՝ Ներքին Հանդ: Տաթևի վանքի «Քեթուկ» հարկացուցակում (1781թ.) հիշատակված է Չավնդուր գավառի Հանդից 1600 դահեկան պտղի հարկով: Ակներ է, որ նոր անունն առաջացել է Հանդի Կովսական հնչումից, խառնաբարձի ազդեցությամբ: Գյուղի մերձակայքում կան եկեղեցիների և այլ շինությունների ավերակներ: Ներքին Հանդի համապարփակ պատմությունը գրքայինով ներկայացրել է անվանի լրագրող Լենդրոշ Հակոբջանյանը:

ՈՌԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ԷՋԱՆԱՆՅԻ)

Ճանաչված դիրիժորը մտահոգված է

ԱՐԿԵՍ

Փետրվարի 10-15-ը մարզում էր «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական երգչախմբի ղեկավար և դիրիժոր, պրոֆեսոր Տիգրան Չեքեքյանը: Նա եղավ մարզի բոլոր քաղաքային համայնքներում, ունկնդրեց մանկական երգչախմբերի կազմակերպմանը, վարպետաց դասեր անցկացրեց արվեստի, երաժշտական և հանրակրթական դպրոցների երգչախմբերի խմբավարների հետ, ունկնդրեց այդ կրթօջախների երգչախմբերի ելույթները, մասնագիտական խորհուրդներ փոխարինեց:

«Առաջին անգամ, երբ եկա Սյունիք, պատմում է նա, եկա ծանոթանալու, գոնե ինձ համար պարզելու, թե ինչ է մնացել խորհրդային ժամանակներից: Այն համոզմունքն ունեի, որ մարզը վերածնունդ պիտի ապրի, եւ դրա հիմքում պիտի լինի մշակույթը, մշակութային վերածնունդը: Որովհետեւ որեւէ բան չի կարող երջանակացնել մարզում, եթե գոյություն ունի մշակութային վակուում, եթե կա դատարկ տարածք: Բայց այնքան էլ հիացած չէի իմ անդրանիկ այցից եւ կարելի է ասել. նեղարտած ու տխուր էի վերադառնում Սյունիքից: Բայց որքան տխուր, այնքան հաստատական և հավատով, որ մի բան պետք է անել եւ շատ կարելու բան»:

Բանն այն է, որ շուտով կայանալու է «Երգող Հայաստան» դպրոցական երգչախմբերի փառատոնը, եւ ճանաչված դիրիժորի այս անգամվա այցը մարզ նպատակ ուներ տեղում ծանոթանալ մանկական երգչախմբերի վիճակին: «Երգող Հայաստան» փառատոնն արդեն որերորդ անգամ անցկացվում է, մի քանի անգամ փորձ է արվել մարզերում եւ անցկացնել, բայց ամեն անգամ խոչընդոտներ է հանդիպել տեխնիկական բնույթի, նաեւ սուբյեկտիվ՝ որոշ մարզկանց անտարբերության ու անկազմակերպվածության պատճառով: Այդպես Սյունիքը չի հայտնվել եզրափակիչ՝ հանրապետական փուլում: Ինչ կստացվի այս անգամ, չգիտեմ, բայց թաքուն հույս եմ փայփայում, որ գոնե այս անգամ փառատոնի մարզային փուլը կկայանա»:

Տիգրան Չեքեքյանը լրջորեն մտահոգված է հանրապետությունում սիրողական երգչախմբերի պակասով: Նրա փոխանցմամբ՝ հանրապետությունում գործում է վեց պետական երգչախումբ, ինչը չես հանդիպի զարգացած երկրներում: Իսկ ահա սիրողական երգչախմբեր համարյա չկան: Մասետրոն վկայակոչեց Հոլանդիայի օրինակը, որ նույնպես փոքր երկիր է, բայց այնտեղ 9 հազար սիրողական երգչախումբ է գործում: Իսկ մեզանում: Երեւոյթը ներկայացնելու համար մեքեքեքեց ժողովրդական խոսքը՝ ամուռը կա, ամանունը՝ չկա: Եվ այս անգամվա այցից եւս տխուր զգացողություններ ունեցավ:



«Հանդիպումներ ունեցա երգչախմբերի խմբավարների, նաեւ այն սովորողների հետ, ովքեր այս ուստարում ավարտում են ուսումնառությունը: Նույն անմխիթար վիճակն է: Տխուր տպավորություններով եմ վերադառնում այստեղից: Ծատերը չպիտի զբաղվեն իրենց մասնագիտությամբ, ումանք դրանից այնքան են հեռացել, որ չգիտես ինչպես մոտեցնել: Հեռացել են ոչ թե մայրաքաղաքի երաժշտական կյանքին չառնչվելու (հեռավորության խնդիր կա), այլ դասական արվեստի հանդեպ վերաբերմունքի պակասի պատճառով: Այսօր նաեւ մասնագիտական ռեսուրսի խնդիր կա: Զկա մկրիյալ վերարտադրող,

այսինքը՝ սովորեցնողը: Երբ այս մասին խոսում ես հանրապետության մշակույթի, ինչպես նաեւ կրթության եւ գիտության նախարարների, այլ բարձրաստիճան իշխանավորների հետ, կարծես պատկերացնում են խնդիրը: Բայց քանի որ մի տեսակ «ներսում» չեն, չեն գիտակցում, որ Երեւանին սպասվելու է նույն այն ճակատագիրը, նույն այն հոգեւոր դատարկությունը, որն այժմ կան մարզերում: Ուղղակի դա մի քանի տարի, գուցե մեկ-երկու տասնամյակ հետո կարող է տեղի ունենալ»:

2011թ. հոկտեմբերի 1-ին Կապան քաղաքի տոնին մկրված հանդիսությունը մասնակցում էր Տիգրան Չեքեքյանը «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի հետ: Արվեստի քոլեջում կայացած համերգից հետո դիրիժորը հայտնեց, որ մարզի ղեկավարության հետ նախատեսում են արվեստի քոլեջում կազմակերպել միջազգային փառատոններ՝ ինչպես երգչախմբային արվեստի, այնպես էլ երգեհոնային երաժշտության: Մանավանդ իր կարծիքով՝ քոլեջի դահլիճն այդ հնարավորությունն ապահովում է՝ հրաշալի ակուստիկայով եւ երգեհոնով: «Սյունյաց երկիրը» հետաքրքրվեց, թե որեւէ հաղաչարժ կա՞՞ այդ ուղղությամբ: Տիգրան Չեքեքյանը փոխանցեց, որ մտահոգացումն ուժի մեջ է, բայց դարձյալ խնդրահարույց է մնում ինչպես երգեհոնի, այնպես էլ երգեհոնային դահլիճի նորոգումը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեղրու ավազանին ուղերձ է հղել ՀՀ նախագահին

Ս.թ. հունվարի 25-ին Մեղրու ավազանին ուղերձ է հղել Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին: Ավազանին այդ որոշումն ընդունելիս ղեկավարվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով եւ հիմք ընդունել Մեղրի քաղաքի մի խումբ բնակիչների կողմից համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված դիմումը: Ավազանին, ըստ որոշման, հնարավոր բոլոր միջոցներով իր հերթին կնպաստի փարածաշրջանի բնապահպանական վիճակի բարելավմանը: ՀՀ նախագահին հղած ուղերձի տեքստը՝ ստորև:

Մեղրի քաղաքի 70 բնակիչ 2012թ. դեկտեմբերի 27-ին դիմում են հղել համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին: Դիմումի մեջ մասնավորապես ասված է. «Վերջերս մեզ հայտնի դարձավ, որ Սյունիքի մարզի Լիճքի եւ Վարդանիճորի գյուղապետարաններում տեղի են ունեցել հասարակական լուսններ՝ այդ համայնքների տարածքում գտնվող պղծի եւ մոլորեցի հանքավայրերի շահագործման խնդրի շուրջ: Այդ իրողությունը մեզ ավելի քան անհանգստացրել է, թելուզվե այն պատճառով, որ տնտեսավարող սուբյեկտները խուսափել են նման լուսններ կազմակերպել մշակված հանքավայրերին մոտ գտնվող Մեղրի քաղաքում եւ ազդակիր մյուս համայնքներում:

Ինչպես գիտեք, Մեղրու տարածաշրջանը բնապահպանական լուրջ մարտահրավերների առջե է կանգնած: Չեզ հայտնի է նաեւ, որ տարածաշրջանի հիմնական հանքավայրերը դժբախտաբար գտնվում են բնակավայրերից զգալիորեն բարձր միջերում, որտեղ ջրագոյացման եւ ջրաբաշխման համակարգերն ու ջրահավաք ավազաններն են՝ ինչպես խմելու, այնպես էլ՝ ոռոգման ջրի: Արդեն իսկ գործող հանքերը (Տերտերասար, Լիճքվազ-Թեյ, Ագարակի պղծամոլորեցի) տարածաշրջանում աղետալի իրավիճակ են ստեղծել: Եվ ընդհանրապես՝ պետք է հաշվի առնել, որ Մեղրու շրջանի բոլոր հանքավայրերում որպես ուղեկցող էլեմենտ հանդես են գալիս ուրանը, ինչպես նաեւ թորիումը: Դրանց պարունակությունը հատկապես մեծ է Լիճքի, Տաշտունի, Լիճքվազ-Թեյի հանքավայրերում (բարտեզը կցվում է): Բացի մշակված եւ ներկայումս շահագործվող հանքավայրերից, արտոնագրեր են տրված՝ բազմաթիվ նոր հանքավայրերի ուսումնասիրության եւ շահագործման համար: Փաստորեն տարածքը կանգնած է լուրջ փորձության առջե: Ավելորդ չէ հիշեցնել, որ Մեղրի գետը, սկիզբ առնելով մոտ 3100մ բարձրությունից՝ խիստ մեծ թեքությամբ, հասնում է ծովի մակերեսային 500-600 մետր բարձրության վրա գտնվող Մեղրու տարածք՝ առանց որեւէ խոչընդոտի իր հետ բերելով հազարավոր տարիներ իրենց խիստ թունավոր հատկությունները չկորցնող մյուսեր՝ վարակելով բնակավայրերի հողն ու ջուրը: Այժմ արդեն հանքերից եւ պղծամոլորեցի տարածվող վտանգավոր այլ նյութերով, աղտոտում է մեր տարածքի օդը, հողը, ջուրը: Տեսանելի է, որ գործարար աշխարհը՝ տիրապետելով ժամանակակից գերագույն տեխնոլոգիաների, չունենալով պատշաճ խիղճ համար անպիտանի: Նույնիսկ այսօր, երբ դեռես հանքարդյունաբերությունն իր կամխատենելի ծավալներից շատ հեռու է, արդեն անգնեալ վայրով, առանց հետազոտությունների տեսանելի է, որ տարածքում համատարած է աղետամոլորային, հիպերտոնիկ, շնչուղիների եւ այլ

հիվանդությունների աճը: Մարդիկ դժգոհում-զանգատվում են գլխացավերից, հոդացավերից, հոգնածության զգացողությունից: Այնպես որ տեղի հիվանդությունները կանգնեցնելու համար պարտադիր է հիշեցնել, որ Մեղրի գետը, չորանում են ծառերը, բանջարեղեն գրեթե չի աճում, գյուղատնտեսությանը զբաղվելը դառնում է անիմաստ:

Դատարկ ապարները, որոնք նույնպես թունավոր շատ նյութեր են պարունակում, ծածկում են շրջակա ծորերն ու կիրճերը եւ լեռնային գետակների զորությանը լցվում Մեղրի գետը, այսինքն՝ ոռոգման համակարգ: Տնտեսվարող սուբյեկտները, համապատասխան գերատեսչությունների թույլտվությամբ հասարակությունից ուղղակի գաղտնի մտնում են նաեւ ուրանի, թորիումի նախկինում հայտնաբերված տարածքներ (Լիճք, Տաշտուն, Լիճքվազ-Թեյ) եւ գունավոր մետաղների հավելյալ հետախուզական-որոնողական աշխատանքներ իրականացնում՝ ապագայում դրանց արդյունահանման նպատակով: Տեղեկատվության բացակայությունը լուրջ ռիսկեր է ստեղծում ինչպես հանքերում աշխատող, այնպես էլ ազդեցության գոտում գտնվող բնակավայրերում ապրող մարդկանց համար, ովքեր հիմնականում աղքատ են եւ կարիք ունեն աշխատատեղերի, իսկ մշակված ընկերությունների խոստումները սոցիալական ոչ բարվոք վիճակի համապատկերի վրա գայթակղիչ են: Եթե մեր տարածաշրջանի նկատմամբ վարվող քաղաքականությունը չփոխվի, ապա կասկածից վեր է, որ դրա հետեւան-

քով Մեղրու շրջանը մեկ-երկու տասնամյակ անց կվերածվի անապատի՝ աղտոտված գետերով, թունավորված հողով, իսկ երեխաները կծնվեն հիվանդ եւ արատավոր, ինչի մշաններն արդեն իսկ երեւում են»:

Մեղրու ավազանին գտնում է, որ մեղրեցիների այդ մտահոգությունն արդարացի է ու հիմնավոր: Եվ քանի որ խնդիրն ունի վճռորոշ մշանակություն՝ Մեղրու տարածքի հետագա զարգացման ու բնակչության առողջության պահպանման համար, խնդրում ենք Ձեզ՝ Մեղրու տարածքում ստեղծված բնապահպանական վիճակն, ինչպես նաեւ տարածաշրջանում գործող եւ արտոնագիր ստացած նոր հանքավայրերի շահագործման ու դրանից բխող հրատապ խնդիրները քննարկել ՀՀ կառավարությունում եւ գիտությունների ակադեմիայում, նախապես Մեղրիում անցկացնելով իրավիճակի մասնագիտական եւ բազմակողմանի քննություն:

Սույն ուղերձն ընդունվել է Մեղրու ավազանու 2013թ. հունվարի 25-ի նիստում (ավազանու 9 անդամից նիստին մասնակցում էր 9 հոգի, որից ուղերձին կողմ քվեարկեց 9 հոգի):

Մեղրու ավազանու անդամներ՝

- Ադամյան Կարեն, Բեգլարյան Մակար, Հայրապետյան Սուրեն, Հարությունյան Համիկ, Հովհաննիսյան Ալեքսան, Հովհաննիսյան Յարոսլավ, Մարգարյան Ծուշանիկ, Օհանյան Սիլբայել

Արշավիր Հովհաննիսյան, Մեղրու քաղաքապետ

25 հունվարի 2013թ.

ՈՒՂԵՐԶ

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին

Հարգելի պարոն նախագահ Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ով, Ձեզ ենք հողում սույն ուղերձը՝ Մեղրու շրջանի բնակչությանը սպառնացող բնապահպանական տագնապալից խնդրի վերաբերյալ:

Եվս մի թաղամաս գազիֆիկացվեց

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Խորհրդային տարիներին Կապանի Վաչագան թաղամասը (նախկինում գյուղ էր՝ իր կոլտնտեսությանը) չէր գազիֆիկացվել: Տներում տեղադրված գազասարքերը սնուցվում էին հեղուկ գազի բալոններով: Իսկ վերջին երկու տասնամյակում բնակիչները մնացել էին վառելափայտի հոյսին: Ահա ինչու փետրվարի 17-ին բնական գազի մուտքը թաղամաս վերածվեց իրադարձության: Ճշմարիտն ասած՝ երեք-չորս տարի առաջ բնական գազի խողովակաշարը հասել էր Վաչագան, բայց դրանով ամեն ինչ ավարտվել էր: Մոսկվայաբնակ երկու կապանցու հովանավորությամբ գործն ավարտին հասցվեց: «Հայռուսագազարդ» ՓԲ ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի աշխատակիցները վերաբեցին երեք տարուհի գազատարին հասցված վնասները, շտկեցին որոշ թերություններ, ինչը հնարավորություն տվեց իրականացնելու վաչագանցիների վաղեմի երազանքը: Գյուղի՝ վերջերս վերաբացված եկեղեցու հարեւանությամբ տեղադրվել էր կապույտ վառելիքի գյուղ մուտք գործելը խորհրդանշող ջախ: Համընդհանուր ոգեւորությամբ ջախի վրա բոցկտաց կապույտ վառելիքը: Դեպի այն տանող ճանապարհը երիզված էր կարմիր ժապավենով, որը կտրելու պատիվը վերապահվեց գյուղի տարեց մարդուն եւ ամենակրոնսեր դարոցակահին:



Կարեւորելով բնական գազի մուտքը Վաչագան՝ Մասիս Վեգիլյանը իր խոսքում այն միտքը հայտնեց, որ 1990-ականների սկզբի ցուրտ եւ մութ տարիներին վաչագանցի մուտք տեսավ, բայց ցուրտը չզգաց: Եվ կատակեց, որ կացինը նույնքան հոնուտ էր բանեցնում, որքան գրպալը: «Դժվարին այդ շրջանում մարդիկ գոյատևեցին անտառի հաշվին, եւ հիմա եկել է անտառին պարտքը հանձնելու ժամանակը, իսկ պարտքը՝ անտառը հանգիստ թողնելն է, որ նա ազատ շունչ քաշի, վերականգնի իրեն հասցված վնասը: Վերջին ժամանակներս Վաչագան այցելելիս, ցավով էինք տեսնում գազատարի անմխիթար վիճակը, հույս չունեինք, որ այսօրվան կհասնենք», - ասաց ու նաեւ հընքացս երախտագիտություն հայտնեց «Հայռուսագազարդ» ՓԲ ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի ղեկավարությանը (տնօրեն՝ Արթուր Խաչատրյան), Կապանի քաղաքապետարանին, կապույտ վառելիքը թաղամաս հասցնելուն նպաստած անձանց: Մ.Վեգիլյանը իր խոսքը եւս փորձեց ավարտել կատակով, թե գազօջախից օգտվելուց հետո չմոռանան անջատել կոճակը: Ավանդը միանգամից պարզ էր, բնական գազից օգտվելիս անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները:

Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, շնորհավորելով թաղամասի բնակչությանը հիշարժան օրվա առթիվ, հայտնեց, որ գազագործները դրանով չեն բավարարվի եւ կծգտեն, որ մարդիկ հնարավորինս շուտ կապույտ վառելիքն օգտագործեն իրենց կենցաղում: Համայնքի ղեկավար Սվետլանա Օհանջանյանը շնորհակալություն հայտնեց գազագործներին՝ վաչագանցիների օջախում հարմարավետություն ունենալու ցանկությունն իրականացնելու համար:

Միջոցառման ավարտից հետո «Հայռուսագազարդ» ՓԲ ընկերության Սյունիքի գազամատակարարման եւ գազիֆիկացման մասնաճյուղի տնօրեն Արթուր Խաչատրյանը «Այունյաց երկիր» թերթին փոխանցեց, որ գազատարը Կապանի քաղաքապետարանի սեփականությունն է, այն անհատույց շահագործման պիտի հանձնվի իրենց մասնաճյուղին, որից հետո տեխնիկական պայմանները պիտի ճշտվեն, նախագիծ ու նախահաշիվ կազմվեն՝ սպառողների տները բնական գազ անցկացնելու համար:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայում վերագործարկվեց կարի արտադրամասը

Փետրվարի 15-ին վերագործարկվեց Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի՝ «Սոնատես» ՔԲ ընկերության կարի արտադրամասը: Ընկերության խորհրդի նախագահ Դերենիկ Մարգարյանը ձեռնարկություն այցելած Սյունիքի մարզպետի եւ ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար շրջայց կազմակերպեց: Մինչեւ տարեվերջ կգործարկվեն նաեւ մյուս արտադրամասերը: Կարտադրվեց մանկական եւ մեծահասակների ժակետ, ջեմպեր, ներքնագգեստ եւ այլն: Ըստ Դերենիկ Մարգարյանի՝ աշխատակիցներն անցնում են 12-օրյա ուսուցողական շրջան, իսկ սովորելուց հետո սկսում են աշխատել: Ֆաբրիկայի նախկին աշխատակիցներից ոմանք եւս աշխատում են այստեղ, կան նաեւ նորեկներ: Ընկերությունն աշխատում է միայն պատվերով: «Պատվերների հարցով անձամբ եմ զբաղվում, արդեն Ռուսաստանի մի քանի մարզերից պատվերներ կան, - նշեց Դ.Մարգարյանը: - Նյութերը նախկինում բերում էինք Թուրքիայից, Հինաստանից եւ Բելոռուսից, այժմ բերելու ենք Թուրքիայից եւ Հինաստանից: Արդեն

ծեռք ենք բերել 8-9 տոննա կտոր, որով սկսել ենք աշխատանքները, իսկ թելերը, այլ կտորեղեն եւ նյութեր ընթացքում կգնենք»: Նա նշեց նաեւ, որ մինչեւ տարեվերջ հնարավոր կլինի ստեղծել շուրջ 500 աշխատատեղ: Այժմ նորացվում են գործող մեքենաները, համապատասխան մասնագետները նորացված ծրագրեր են տեղադրում համակարգիչներում, շուտով կաշխատի նաեւ գործող արտադրամասը: Ըստ ՔԲԸ խորհրդի նախագահի՝ իրացման խնդիր եւս չկա, աշխատավարձը սկզբնական շրջանում գործավարձային է լինելու: Շրջայցից հետո Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը լրագրողների հետ զրույցում ասաց. «Մեր հետագա նպատակն է արտադրության ծավալների ընդլայնումը, եւ համոզված եմ, որ այդպես էլ կլինի: Խնդիր էինք դրել Կապանի կանանց եւ աղջիկների համար աշխատատեղեր ստեղծել եւ դրան մասնակիորեն հասանք: Նմանօրինակ այլ ծրագրեր եւս ունենք, որը մոտ ժամանակներում կիրականացնենք»:

ԱՂԱՎԵՐ ՆԱԿԱՍԱՐԿՅԱՆ

Հաբեթակ Խաչիկյան

ԽՈՍՔ ՀԻՇՏԱՍԿԻ

Հ ա ս ե լ եր ժ ա մ ու ն ա կ ն ու Ա ս տ վ ա ժ հ ի շ ե ց իր ծ ա ն ա յ ի ն , ա ս ե լ ո Վ ՝ «Հող էիր եւ հող կդառնաս»:



Ահա մարդկային կյանքի մեծագույն խորհուրդը, առեղծվածը, որ ամեն անգամ եւ ամենուր ծառանում է մեր առջեւ՝ մեզ հալածող սովերի մեծ, ամեն քայլափոխի հետեւում է մեզ՝ անձայն, անշշունկ, անտեսանելի: Մահն ու կյանքն իրարից անբաժանելի են, բայց մահը մեր ընկերն է, մեր բարեկամը, որ շուրջ մեզն է հետեւում է մեզ: Այն իր ներկայությունը եւ ազդեցությունը ցույց է տալիս, երբ մեկի մահվան բոթն ենք լսում կամ կանգնած ենք լինում սեւ, մռայլ դազադի շուրջ: Անխուսափելի է այն, ու թե շուտ բոլորս նրան ենթակա ենք: Մահեր կան, սակայն, որոնց համար զարմանքից ավելի ցնցում ենք զգում, երբ, մանավանդ, այդ անսպասելին պատահում է քո ծանոթի, ընկերոջ կամ բարեկամի հետ ու գալիս է այնքան արագ եւ անսպասելի, երբ պատրաստ չես, եւ այդ մահվան բոթն է, որ մտածելու առիթ է տալիս, միտքը ու բանականությունը այն ընդունում են, բայց սիրտդ չի ցանկանում հաշտվել դրա հետ:

Մարդը ծնվում է, աշխարհ գալիս ոչ իր կամքով կամ պահանջով եւ հեռանում է՝ թողնելով այս աշխարհն իր կամքին հակառակ: Սակայն ծննդից մինչեւ մահ ձգվող այս ընթացքը, որ կյանք ենք անվանում, արժեւորվում է այն ժամանակ միայն, երբ մարդն իսկապես արժանանում է իր մարդկային կոչումին՝ գիտակցելով իր պարտականությունը եւ պարտավորվածությունը:

Այունյաց երկիր
S A Ս Ն Օ Ր Տ Ա Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝
ՍՍՍՎԵՆ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահունյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիրին» պարտադիր է:

ՐՆՁԱՆԻ ՏԱԿ ԵՎ ԳՈՎԱԶԳԱԿԱՆ ՆՅՈՒՄԵՐ:

Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2500, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.02.2013թ.:

Դրոշմ						Սիջատ
Կարողանալու հավաք	Շինարար	Հայկական ծես	Վիսառ Անգլ. ֆիզիկոս		Խոշոր եղջերավոր	
						Գիրտ
Կնունք						Լուսատու Քոչյա
					գյուղ Լուսու մարզում 24 ժամ	
Գեղծ	Գետ հարավ Ամերիկայում	Անգլիացի երգչուհի		Սիջոց		
Ֆրանս. բանաստեղծ						
	Ռուս կայսրուհի			Նախամարդ		Ֆրանս. կոմպոզիտոր
	Հնչեղ		18.4			Ֆեոդոս
				Վերջույթ		
	Ռուս բանաստեղծ	Գարդնաբար				Սալվարո...

Տեր Գալուստ Գաբրիելյան
Կապանի Սբ Մեսրոպ Մաշտոց
Եկեղեցու հոգևոր հովիվ